Քահանան չի կարող ինքը որոշել՝ արտաբերե՞լ Վեհափառի անունը, թե՞ ոչ: Դարեր շարունակ այն զետեղված է եղել խորհրդատետրի մեջ, ուսումնասիրվել է մեր հայրերի կողմից, մենք պարզապես պարտավոր ենք պատարագի այդ հատվածն իրականացնել, ու, առհասարակ, հոգեւորականը չունի իրավունք՝ ցանկացած հատված պատարագից զեղչելու:

Կարդացեք՝ էջ 4

Դուք նույնիսկ չեք պատկերացնում, թե ինչ ասել է՝ կարգավորել հարաբերությունները 2 պետությունների միջեւ: Այն, ինչ դուք փորձում եք անել, ավելին չէ, քան տիրոջ եւ ծառայի հարաբերությունների կարգավորումը, հաղթողի ու պարտվածի հարաբերությունների կարգավորումը, հովվի եւ հոտի հարաբերությունների կարգավորումը:

Կարդացեք՝ էջ 5

Կրթական հաստատություններում մեդիագրագիտության դասեր տվող ՀԿ-ները, երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվողները չե՞ն ուզում անդրադառնալ այս հարցերին՝ կարելի՞ է առանց ծնողի կարծիքը, թույլտվությունը հարցնելու, նրանց երեխաներին ինչ-որ հանդիպումների տանել, ուղեղները լվանալ: Չկա՞ օրենքի խնդիր:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 191 (4093), 27 նոյեմբեր, հինգշաբթի, 2025

www.hraparak.am

Պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, որը պաշտոնավարել է նաեւ 44-օրյա պատերազմի օրերին, երեկ հայտարարեց, որ դիմել է ԱԺ նախագահին՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցին եւ հանձնաժողովում իր մասնակցությամբ նիստերի արձանագրություններին ծանոթանալու համար, սակայն մերժում է ստացել՝ այն հիմնավորմամբ, որ զեկույցն իրավական կարգավիճակ չունի. հայտնի է, որ ԱԺ նախագահն այն ուղարկել է խորհրդարանի գաղտնի բաժին, որին ծանոթանալու իրավունք ունեն միայն գաղտնիության «դոստուպ» ունեցող պատգամավորները: Տոնոյանը տեղեկացրել է նաեւ, որ խորհրդակցելով իր փաստաբանական խմբի հետ եւ համարելով, որ մերժումն անհիմն է, կրկին դիմել է ու սպասում է պատասխանի: Մեր տեղեկություններով, Դավիթ Տոնոյանին թույլ չեն տալու ծանոթանալ զեկույցի հետ, քանի որ, ինչպես նշեցինք, դրան կարող են ծանոթանալ մարդիկ, որոնք գաղտնիության «դոստուպ» ունեն, ընդ որում՝ պատգամավորներից ոմանք, օրինակ՝ Սեյրան Օհանյանը նույնպես, իր նկատմամբ հարուցված քրեական վարույթների պատճառով, չունի այդ «դոստուպը» եւ թեպետ ցանկություն ունի այդ զեկույցին ծանոթանալու, բայց իրավունք չունի: Փոխարենը, մեզ ասացին, որ Տոնոյանն իրավունք ունի եւ կարող է ստանալ իր մասնակցությամբ նիստի արձանագրությունները:

Ենք տեղեկացանք, որ մոտ մեկ ամիս առաջ իրավապահները փակել են Գագիկ Ծառուկյանի ելքը երկրից՝ ՍԷԿՏ-ը (սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ): Այս արգելքը դրվել է նրա նկատմամբ մի հին՝ 2018-19-ին հարուցված քրեական գործով եւ անսպասելի է եղել բոլորի, այդ թվում՝ նրա պաշտպանների համար: Ենթադրվում է, որ ՍԷԿՏ-ը փակել են, որ Ռուսաստան չմեկնի, եւ նախընտրական գործընթացները դանդաղեն: Սակայն սա Ծառուկյանի նկատմամբ իշխանական «վերաբերմունքի» միակ դրսեւորումը չէ: Նրա որդուն առաջադրված թույլ մեղադրանքով այժմ քննություն է գնում, այդ գործով անցնող բոլոր մյուս անձանց նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցներ են ընտրվել, իսկ Ծառուկյանի որդու նկատմամբ կալանքի եւ հետախուզման որոշումը դեռ պահպանվում է: Այս ամենին գումարած՝ մոտ 10 օր առաջ ՊԵԿ-ը կրկին ստուգումներ է սկսել «Շանգրի լա» խաղատանը. հարկայինի տեսուչները ստուգում են ամեն մի ֆիշկան ու ամեն խաղադրույքը: Չնայած այս, ինչպես եւ այլ խաղատների հասույթն օնլայն կազինոների պատճառով անգամներով նվազել է:

Յո երթաս, Հայաստան

Թե օրական քանի կիլոգրամ ու քանի կուբամետր կեղծիք կամ անհեթեթություն է լսում ՀՀ քաղաքացին, թե ինչքան պաշտոնական ստորության, անգործության, տգիտության է բախվում նա, թե ինչպես են վիրավորում նրա լսելիքը անգրագետ հայերենով, տգեղ հայհոյանքներով ու անպարկեշտ արտահայտություններով, դժվար է նկարագրել ու չափել: Դրանց քանակն ահռելի է՝ քաղաքացու առողջության եւ գիտակցության համար վտանգավոր: Եվ այդ քանակը թվաբանական պրոգրեսիայով աճելու է՝ ընտրությունների մոտենալուն զուգահեռ: Միաժամանակ նաեւ նոր աղետներ ու արհավիրքներ են մեզ պատուհասելու: Օդի աղտոտության աստիճանը Երեւանում հասել է աստղաբաշխական չափերի, Ճամբարակի, Բերդի ու Դիլիջանի անտառները շարունակում են այրվել, իրավապահները ձերբակալել են ֆիզկուլտինստիտուտի եւ ԲՈԿ-ի բարձրաստիճան պաշտոնյաների՝ կաշառքի ու չարաշահումների մեղադրանքով, խուզարկություններ են իրականացվել Աբովյանի հեղինակությունների տներում՝ զենք են փնտրում: Եվ նույն օրն Ազգային ժողովում քաղբանտարկյալների թեմայով լսումներ են ընթանում, որն իրավապահ կառույցների ղեկավարները կազմակերպված բոյկոտել են: Նրանք 2008 թ. մարտի 1-ի թեմայով լսումներին են միայն գնում եւ նախկին իշխանություններին խարազանող ելույթներ ունենում: Լսումները բոյկոտել են նաեւ ԵՄ անդամ երկրների դեսպանները, որոնք մինչեւ 2018-ը մոմով քաղբանտարկյալ, ճնշված լրագրող ու լրատվամիջոց էին փնտրում, որ հայտարարություն անեն, զեկույց գրեն: Այսօրվա Հայաստանի «դեմոկրատիայի մակարդակը» նրանց լիովին բավարարում է՝ ո՛չ բարձրաստիճան հոգեւորականների կալանավորումները, ո՛չ մեկ նախադասության համար բանտարկված գործարարի, ո՛չ հայհոյանքի համար երկրորդ անգամ «Արմավիր» ՔԿՀ-ում հայտնված լրագրողների ճակատագիրը նրանց չի հետաքրքրում:

Քաղբանտարկյալների հարցով ընդդիմադիրների հրավիրած լսումներին երեկ գլխավոր դատախազը չէր ներկայացել: Լսումները բոյկոտել էին նաեւ ՀՀ-ում հավատարմագրված ԵՄ դեսպանները, որոնց եւս հրավիրել էին՝ ներկա գտնվելու կամ ներկայացուցիչ ուղարկելու: Լսումներին մասնակցում էր միայն ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան քաղաքական գծով մասնագետ Լիլիթ Օհանյանը, որը, նիստերի դահլիճում նստած, հետեւում էր լսումներին: Փաստորեն, ժողովրդավարական արժեքների ջատագով հռչակված ԵՄ անդամ պետությունների դեսպանները ոչ միայն իրենք չեն հետաքրքրվում քաղաքական հետապնդումներով եւ չտեսնելու են տալիս Հայաստանում բռնություններն ու ապօրինությունները, այլեւ անգամ նման քննարկումներին չեն մասնակցում՝ բացահայտորեն ցույց տալով, որ կողմ են այս իշխանությունների վարած քաղաքականությանը, եւ նրան քարտ-բլանշ են տվել երկրում բռնապետություն հաստատելու ճանապարհին:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԸ

Որոշ տեղեկություններով՝ այն ՔՊ-ականները, որոնք չեն դիմում նախընտրական ցուցակում առաջադրվելու համար, գլխացավանքի մեջ են ընկնելու՝ նրանց հարցով անձամբ Նիկոլ Փաշինյանն է զբաղվելու: Նեղ շրջանակում ասում են, որ նա չառաջադրվելն էլ է ըմբոստություն համարում եւ որոշել է այդ «հանդուգններին» պատժել, քանի որ համարում է, որ մերժում են իրեն, իր քաղաքականությունը, փորձում են «գնացքից թռնել»՝ խույս տալ պատասխանատվությունից, ինչն ինքը թույլ չի տալու: Իզուր չէ, որ ոմանք նրանց պատանդ եւ թրաֆիքինգի զոհեր են համարում: Ըստ առաջնորդի, բոլորը պարտավոր են առաջադրվել ու ամեն ինչ անել, որ ՔՊ-ն վերարտադրվի: Բացառություն կլինեն միայն նրանք, որոնց Փաշինյանը կասի, որ չառաջադրվեն, որովհետեւ «այլ տեղում է նրանց տեսնում»: Երեկ լրատվամիջոցները գրեցին, որ ՔՊ-ական որոշ կանայք ցանկություն չունեն առաջադրվելու, խոսքը Լենա Նազարյանի, Քրիստինե Պողոսյանի եւ մի քանիսի մասին է: Ասում են նաեւ, որ հնարավոր է՝ Շիրակ Թորոսյանն ու Խաչատուր Սուքիասյանն էլ չառաջադրվեն: Սակայն Լենան Աննա Հակոբյանի ընկերուհին է՝ հաստատ պատժվողների ցանկում չի լինի: ՔՊ-ում հատկապես բուռն խոսակցությունների թեմա է դարձել, որ առաջադրվելու ցանկություն կարծես թե չունի Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը: ՔՊ վարչության վերջին նիստին նա լրագրողների հարցին՝ առաջադրվե՞լ է, թե՞ ոչ, չէր պատասխանել: Միայն հաստատել էր մեր այն լուրը, որ նախընտրական շտաբում ինքը Երեւանի պատասխանատուն է նշանակվել:

ՖՈՐՈՒՄ

ԿՄԻԱՎՈՐՎԻ՞ ԱՐԴՅՈՔ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԻԿՈԼԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՇՈՒՐՋ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ի խումբ ճանաչված քաղաքական եւ հասարակական գործիչներ նոյեմբերի 25-ին Գլխավոր դատախազություն հանցագործության մասին ծավալուն հաղորդում են ներկայացրել՝ ընդդեմ Հայաստանի վարչապետի, որտեղ, ըստ ժամանակագրության, արձանագրել են Հայ առաքելական եկեղեցու, առանձին հոգեւորականների, քաղաքական հակառակորդների դեմ իրականացվող ապօրինությունները:

18 էջանոց փաստաթղթում ամսաթվերով, լրատվական կայքերի ու սոցցանցերի հարթակների հղումներով, փաստերով հեղինակները նշել են այն բոլոր հանցանքները, որոնց համար մեղադրում են Փաշինյանին՝ սկսած հոգեւորականների հեռախոսային խոսակցությունների ապօրինի գաղտնալսումներից, վերջացրած վարչապետի ֆեյսբուքյան անպարկեշտ լեքսիկոնով՝ դոմփել, պոռնկաբարո: Նաեւ Հայ առաքելական եկեղեցու հասցեին հնչեցրած սպառնալիքներով, որոնք իրավապահներն ընդունում են որպես հրահանգ եւ գործողությունների կոչ: Փաստաթղթի հեղինակները քրեական օրենսգրքի հոդվածներ են նշում, հանցանքի տեսակներ՝ մարդու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների եւ հաղորդակցության այլ ձեւերի գաղտնիության խախտում, միջամտություն արդարադատության իրականացմանը, ինքնիրավչություն, քաղաքացիների սահմանադրական ազատությունների բազմաթիվ խախտումներ, կրոնական կազմակերպության օրինական գործունեությունը կամ կրոնական ծեսի կատարմանը խոչընդոտում, իշխանական լիազորությունների չարաշահումներ եւ այլն: Վարչապետի յուրաքանչյուր արարքի, անձանց իրավունքները խախտող յուրաքանչյուր գրառման դիմաց Քրեական օրենսգրքի հոդվածի կոնկրետ մաս է նշված, Սահմանադրության դրույթ, որը նա խախտել է: Այսպիսի մանրամասն ու համապարփակ փաստաթուղթ դեռ չէր կազմվել: Հեղինակները կարեւոր գործ են արել: Ստորագրող գործիչները վստահ են՝ Փաշինյանն «անձամբ ղեկավարում, կազմակերպում, հրահանգում եւ իրագործում է վերոնշյալ հանցագործությունները»:

Դիմումի տակ տեսնում ենք ամենատարբեր, երբեմն նույնիսկ իրար հակասող քաղաքական դիրքորոշում ունեցող գործիչների ստորագրություններ: Իրավապաշտպաններ Ժաննա Ալեքսանյանը, Արման Վեզիրյանը, Նինա Կարապետյանցը՝ իր «Նժար» նախաձեռնությամբ, կուսակցություններ, որոնց մասին ամիսներ առաջ լուր կար, որ բանակցում են համատեղ հանդես գալու մասին. Հայ ազգային կոնգրես, «Ապրելու երկիր», «Հայաքվե», Հայկ Մարությանի «Նոր ուժ»: Կան նաեւ լրագրողներ, խմբագիրներ՝ Տիգրան Պասկեւիչյանը, Արամ Աբրահամյանը, Սաթիկ Սեյրանյանը, որոնք, անկախ քաղաքական հայացքներից, միավորվել են եւ պահանջում են՝ Փաշինյանին այս բռնաճնշումների համար քրեական պատասխանատվության ենթարկել:

«Հայաստանի իշխանությունները, խախտելով Սահմանադրության եւ օրենքների պահանջները, կոպտորեն ոտնահարում են մեր ազգային կրոնական կազմակերպության ինքնակառավարման սկզբունքը, նրա սեփականության իրավունքները, իշխանական լիազորությունների չարաշահմամբ եւ ինքնիրավչությամբ միջամտում նրա ներկազմակերպական գործերին, խախտում մասնավոր եւ ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության սկզբունքը»,- գրում են նրանք:

Մենք տեղեկացանք, որ այսքան տարբեր գործիչներին՝ իշխանությանը պատասխանատվության կանչելու գաղափարի շուրջ միավորելու նախաձեռնությունը Հայ ազգային կոնգրեսինն է, չնայած Լեւոն Զուրաբյանի ստորագրությունն ամենավերջում է դրված: Ինչպե՞ս է հաջողվել միավորել այսչափ տարբեր ուժերի, որքանո՞վ է հնարավոր, որ այս նախաձեռնությունից ընդդիմադիր նոր պլատֆորմ ստեղծվի: Կոնգրեսից այս հարցերին չեն պատասխանում: ՀԱԿ վարչության անդամ **Արմեն Խաչատրյանն** ասում է. «Տեսնենք: Գլխավոր պրոբլեմը բոլորի միացումն է: Աստծուց առաջ չընկնենք»: Հնարավո՞ր է, որ հետագայում մի նոր շարժում, ուժ ձեւավորվի՝ Նիկոլին պատասխանատվության կանչելու հողի վրա: «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մեսրոպ Առաքելյանը** պատասխանում է. «Այո»: «Տարբեր ուժերի հետ ունենք բանակցություններ, իսկ Եկեղեցու պաշտպանության հարցով պատրաստ ենք նաեւ մի կողմ դնել առկա տարաձայնությունները՝ հաշվի առնելով հարցի համազգային կարեւորությունը, ինչը վեր է կուսակցական եւ քաղաքական գործընթացներից: Եկեղեցու դեմ կատարված հանցագործությունների մասով հասարակական-քաղաքական գործիչների համատեղ քննարկումը կարեւոր արձանագրում է Եկեղեցու պաշտպանության համար. անկախ իշխանությունների քաղաքական խայտառակ վարքագծից, առկա են հստակ իրավական խախտումներ: Այս անընդունելի գործընթացը վաղ թե ուշ արժանանալու է իրավապահ համակարգի արդար գնահատականին»,- ասում է նա:

Իրավապաշտպան **Ժաննա Ալեքսանյանն** ասում է, որ գաղտնիքը թերեւս այն է, որ հրավիրել էին «նորմալ», ոչ օդիոզ մարդկանց՝ ամենատարբեր քաղաքական ուժերից, ՀԿ-ներից, անհատների: Նրանք հետաքրքրված են պայքարելու այն արշավի դեմ, որն իրականացնում է Փաշինյանը: «Մինչեւ այդ հայտարարությունը, քննարկում կազմակերպվեց, որի ընթացքում համոզվեցինք, որ այդ տարբեր քաղաքական եւ հասարակական գործիչները շատ հարցերում ունեն ընդհանրություններ: Սա առաջին հավաքն էր, գիտեմ, որ այլ հարցեր էլ են քննարկվելու, ամենատարբեր խնդիրներ, որոնք այսօր ծառացած են: Լեւոն Զուրաբյանն ասաց, որ դեռ չեն ուզում գործիքակազմը բացահայտել, բայց ունեն հետաքրքիր գաղափարներ: Հետաքրքիր ելույթներ եղան: Մանե Թանդիլյանն ասաց, որ պետք է անցնել գործի: Էդգարը՝ Ղազարյան, խոսեց մեր Սահմանադրության մասին, որն այնքան կատարյալ է գրված, որ այն կարելի է համեմատել գրական ստեղծագործության հետ: Երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ կային: Ուրախ եմ, որ կա համախոհություն, որ ձեւավորվում է մի ուժ, որը կարող է ապօրինությունների դեմն առնել», - ամփոփեց Ժաննա Ալեքսանյանը:

Նկատենք, սակայն, որ ստորագրողներն այս կուսակցությունների առաջին դեմքերը չեն: «Ապրելու երկիր» կուսակցությունից հավաքին ներկա է եղել Մանե Թանդիլյանը, սակայն փաստաթղթի տակ ստորագրել է Արաքսյա Գրիգորյանը, Հայկ Մարությանի ղեկավարած «Նոր ուժ» կուսակցությունից ստորագրել է Արամ Թորոսյանը: «Հայաքվե» նախաձեռնության անդամ **Արամ Պետրոսյանը**, մեր հարցերին պատասխանելով, չհերքեց՝ այո, փաստաթղթի տակ քաղաքական տարբեր դավանանքի ուժեր են ստորագրել: Բայց հարկ համարեց շեշտել, որ նույնաբովանդակ փաստաթուղթ իրենք էլ են ուղարկել դատախազություն: Ինչպիսի՞ շարունակություն կլինի, կկարողանա՞ն միավորվել՝ դժվարանում է ասել: «Օրինակ, եթե քննարկվի Արցախ վերադարձի իրավունքը, այն հարցերը, որոնց ուղղությամբ մենք շարժվում ենք, այն կետերում, որտեղ որ մեր ու իրենց ասածը համընկնում է, ցանկացած ուժի հետ պատրաստ ենք համագործակցել: Կարեւոր է, թե ինչ գաղափարի կռիվ է»:

ՀԱԿ-ի կազմակերպած քննարկման ժամանակ «301-ի խորհուրդ» ՀԿ նախագահ **Հայկ Նահապետյանը**, որը դեռ «Ստամբուլյան կոնվենցիայի» դեմ պայքարի օրերին էր ակտիվ, առաջարկ է արել առարկայական գործիք սարքել՝ աշխատանքային մարմին, որը մշտական կգործի, պլանավորում կանի, քայլեր կմշակի, ակցիաներ կանի, քարոզչությամբ կզբաղվի: «Հասարակաքաղաքական, փորձագիտական շրջանակներ կան, որոնք ունեն նույնական կարծիք: Ապացուցողական իրավական հիմքով գրություն ուղարկելը դատախազությանը լավ բան է, բայց գործիք չկա՝ քո արդարացի պահանջին տեր լինելու: Լավ բան է՝ ինչ-որ բան ասել, հետո գնալ տուն: Ես առաջարկում եմ տուն չգնալ»,- ասում է նա: Հայկ Նահապետյանը վստահ է, որ կորիզը, որը ձեւավորվեց, կարող է ընդլայնվել, մեծանալ: «Այսօր Եկեղեցու հետ կապված՝ ընդդիմադիր դաշտում չկա ուժ, որ այլ կարծիք ունի: Եկեղեցին մերանն է միավորման, ուժերի բոլոր տարաձայնություններով, տարակարծություններով հանդերձ, անկախ քաղաքական կողմնորոշումներից, անկախ նրանից, թե ինչ լարումների մեջ են այդ ուժերը: Էդ բոլորը մի կողմ ենք դնում, որովհետեւ հիմա մեր միջնաբերդն են ուզում վերցնեն: Եկեք կազմակերպենք՝ առաջարկեցի, եւ համաձայնեցին»:

1 ՀԵԿՏԱՐ ԼԻԱՐԺԵՔ ԱՆՏԱՌ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է 40-50 ՏԱՐԻ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քանի օր է՝ այրվում են Ճամբարակի, Բերդի, ապա նաեւ Դիլիջանի անտառները: Ներքին գործերի նախարարությունը պարբերաբար հաղորդագրություն է տարածում, թե հրդեհը մեկուսացվել է, բայց պարզվում է, որ այն մոլեգնում է՝ նվազեցնելով մեր առանց այն էլ նվազ անտառածածկ տարածքները: Հասարակությունը տարակուսում է, թե նոյեմբերի վերջին, երբ եղանակը ցրտել է, եւ հրդեհների հավանականությունը խիստ նվազ է, ինչո՞ւ են այրվում անտառները: Գուցե ինչ-որ մարդիկ միտումնավոր այրում են՝ կոծկելով ապօրինի անտառահատումների հետքերը: Բնապահպան **Ինգա Զարաֆյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով հրդեհի պատճառներին, ասում է. «Այստեղ ամառվա հանգամանքն էական չէ: Մենք խոսում ենք լրիվ չոր անտառների մասին: Քանի ամիս է՝ նորմալ անձրեւ չի եկել, այս է պատճառը, որ մի փոքր կրակից այսպիսի հրդեհ է բռնկվում: Ես չեմ կարող որեւէ հստակ պնդում անել, սակայն անտառային հրդեհները սովորաբար սկսվում են այն ժամանակ, երբ եղանակը չոր է լինում: Հատկապես այն տարածքները, որոնք ոչ միայն անտառածածկ են, այլեւ՝ խոտածածկ, դրանք ավելի խոցելի են: Նման տեղերում, եթե մի փոքր կրակ է լինում, դառնում է հսկայական օջախ: Ես արդեն քանի տարի է՝ բարձրաձայնում եմ այս մասին: Խոսրովի արգելոցը նախորդ տարի այրվեց, այրվեցին Մեղրիի անտառները, որոնք սարսափելի արագությամբ այրվեցին, որովհետեւ եղանակային պայմանները չափազանց չոր են Մեղրիում»:

Այդ դեպքում ինչո՞ւ ամռան տապին, երբ +35-40 աստիճան շոգ էր, չէին այրվում նույն Դիլիջանի անտառները: «Դիլիջանում ամռանը եղանակն անձրեւոտ էր: Բայց ո՞վ ասաց, որ ամռանը հրդեհներ չեն եղել: Նույն Մեղրիում լիքը նման հրդեհներ են եղել հենց ամռանը: Ահագին վնասներ եղան: Պետք է լավ մոնիթորինգ արվի, պետք է լավ հասկանան, թե խնդիրն ինչպես է առաջանում, տեխնիկա է հարկավոր, որպեսզի նույնիսկ մի փոքր օջախի դեպքում մեծ հրդեհ չառաջանա: Տեխնիկապես ապահովված ջոկատներ են անհրաժեշտ: Ասում են, որ իրավիճակն արդեն լավ է, մարվում է կրակը: Ռուսաստանում, Կանադայում նույնպես իրավիճակը կրիտիկական է, հեկտարներով անտառներ են այրվում: Հայաստանում անտառների ջրային աղբյուրները վերացել են: Անգամ տեղի բնակիչներն են այդ մասին խոսում: Այս ամենը շատ մեծ վնասներ է հասցնում Հայաստանին: Որպեսզի ստանաս մեկ հեկտար լիարժեք անտառ, դրա համար կպահանջվի 40-50 տարի: Շատ լավ խնամք է հարկավոր դրա համար, ինչը պահանջում է ֆինանսներ, լուրջ վերահսկողություն: Վնասները Հայաստանի համար ահավոր են: Ունենք ընդամենը 11,2 տոկոս անտառ, բայց անտառածածկ տարածքներն այս թվից ավելի քիչ են: Մեր անտառային տարածքները շատ լավն են՝ կենսաբազմազանության տեսանկյունից, սակայն որպես անտառածածկ տարածք՝ մեր անտառները խեղճ վիճակում են»:

Հեղինակությունների տներ են մտել

Մեր տեղեկություններով՝ նոյեմբերի 26-ի առավոտյան իրավապահները Աբովյանում մտել են քաղաքում հայտնի հեղինակությունների տները, խուզարկություններ կատարել՝ զենք փնտրել «ավտարիտետների» բնակարաններում: Ասացին՝ կանխարգելիչ գործողություն է իրականացվել: Խուզարկությունները կատարվել են Քննչական կոմիտեի եւ ՆԳՆ համատեղ աշխատանքի ուժերով: Աբովյանի խուզարկությունների վերաբերյալ ՔԿ-ից մեզ հայտնեցին. «Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում մեկ անձ ձերբակալվել է, կատարվում է նախաքննություն»:

Ի դեպ, երեկ երկրում մոլեգնում էր ոստիկանական «տեռորը»՝ տեղեկացանք միանգամից մի քանի աղմկոտ ձերբակալության մասին: Ֆիզկուլտինստիտուտում եւ Գիտության եւ բարձրագույն կրթության կոմիտեում էին ձերբակալություններ եղել: Ձերբակալվել էին Լեւոն Ֆարմանյանը՝ կոմիտեի գլխավոր քարտուղարը, եւ Տիգրան Գալստյանը՝ կոմիտեի գլխավոր հաշվապահը: Նախնական տվյալներով, նրանց մեղադրում են մոտ 200 միլիոն դրամ չարաշահումների մեջ: Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել էին մեզ, որ նշված պաշտոնյաներին մեղադրանք է ներկայացվել իշխանական լիազորությունները չարաշահելու եւ առանձնապես խոշոր չափերով գումարի հափշտակության համար: Իսկ Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալել էր սպորտային տուրիզմի ամբիոնի վարիչին եւ եւս 2 անձի՝ կաշառք ստանալու համար: Հակակոռուպցիոն կոմիտեից մեզ հաղորդել էին. «Ամբիոնի վարիչը ձերբակալվել է կաշառք ստանալու, մյուս 2 անձինք՝ կաշառք ստանալուն օժանդակելու եւ կաշառք տալու մեղադրանքներով»:

ՄԵՐ 300 ՀԱԶԱՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՍԵՆՔ՝ ԳՆԱՑԵՔ ՏՆԵՐՈՂՎ

*Հարցազրույց «Հայաստան» դաշինքի պատգամավոր **Գառնիկ Դանիելյանի** հետ*

- Մարդու իրավունքների նախկին պաշտպան, «Միասնության թեւեր» շարժման ղեկավար, քաղաքական հայտ ներկայացրած Արման Թաթոյանն ասուլիս տվեց եւ հայտարարեց, որ եթե իսկապես ուզում ենք, որ Նիկոլ Փաշինյանը պարտվի, ապա պաշտոնաթող նախագահները չպետք է մասնակցեն 2026 թվականի ընտրապայքարին: Թաթոյանը ո՛չ առաջինն է, ո՛չ էլ միակը, նրանից առաջ էլ մի շարք քաղաքական գործիչներ այս դիրքորոշումն են հայտնել: Դուք ի՞նչ պատասխան ունեք այս մարդկանց:

- Այն մարդիկ, որոնք Նիկոլ Փաշինյանին քննադատելու կամ իր գործելաոճը դատապարտելու եւ նաեւ ջանքերը մեկտեղելու ծրագիր ունեն, որ նրան հեռացնեն, չպետք է զբաղվեն նրանով, որ ընդդիմության մյուս հատվածի վրա փորձեն ստվեր գցել: Մենք նման գործելաոճով հանդես չենք գալիս ու չենք գալու, պետք չէ թիրախավորել, բոլորն ազատ են ու իրենք են որոշում՝ ինչով զբաղվել: Ի՞նչ պիտի անեն, օրինակ, ընդդիմադիրները, փակե՞ն իրենց կուսակցությունները:

- Խոսքը նախագահների մասին է, որ չզբաղվեն քաղաքականությամբ, չմասնակցեն առաջիկա ընտրություններին:

- Բայց նախագահ Ռոբերտ Քոչարյանն այսօր խորհրդարանի ամենամեծ «Հայաստան» դաշինքի առաջնորդն է, այդ դաշինքը գոյություն ունի, աշխատում է գետնի վրա, հիմա դուք ճի՞շտ եք համարում, որ ինչ-որ մեկն ասի, թե քաղաքական դաշտից ինչ-որ մեկը թող հեռանա: Անլուրջ է: Եթե մտնենք այդ դաշտ, ամեն մեկն էլ իր ճաշակով կարող է մյուսին ասել, որ պիտի հեռանա, ու ընդդիմությունը, իր բանուգործը թողած, կզբաղվի դրանով:

- Այսինքն՝ ասվածի մեջ ճշմարտության հատիկ չե՞ք տեսնում, որ այս իշխանությունը նախկին նախագահների ատելության քարոզչությամբ է եկել իշխանության, ու մի ստվար զանգված...

- Հիմա մեզ մոտ 300 հազար մարդ քվե է տվել, այդ մարդկանց ասենք... ի՞նչ ասենք այդ մարդկանց, որ մեր աջակիցներն են ու մեզ քվե են տվել, ասենք, որ դո՞ւրս ենք գալիս քաղաքականությունից, ո՞րն է դրա ճշմարտությունը: Նույն սոցիոլոգիական հարցումներով, այսօր մենք բարձր վստահություն ունենք, ի՞նչ ասենք մեր աջակիցներին, ասենք՝ չէ, գնացեք տներով, մի՞ մասնակցեք ընտրական պրոցեսներին կամ՝ մի մասնակցեք այլ պրոցեսների: Եթե մարդն ուզում է մասնակցել քաղաքական պրոցեսներին, խնդրեմ, ոչ մեկին իրավունք չունենք ասելու՝ սա պետք է մասնակցի, սա՝ չպետք է: Թող այդ մարդիկ զբաղվեն իրենց գործերով, զբաղվեն իրենց թիմերի ձեւավորմամբ, շտաբային գործունեությամբ, քաղաքական հարցով, երկրում կոռուպցիայի, ապօրինությունների դեմ պայքարի հարցով, լիքը բաներ կան զբաղվելու, թող գնան ու զբաղվեն:

- Զբաղվում են, բայց մեկը մյուսին չի խանգարում:

- Դե, թող զբաղվեն, մեզ հետ ի՞նչ գործ ունեն:

- Դուք եք տիտղոսակիր ընդդիմությունը, որը չկարողացավ իշխանություն փոխել, փոխարենը իշխանության համար «գանձ ընդդիմություն» եք դարձել, իրենք էլ են սկսել բարձրաձայնել, որ քանի Քոչարյանն ու Սարգսյանը կան, մենք կմնանք իշխանության:

- Անլուրջ է, անլուրջ:

- Ի՞նչն է անլուրջ:

- Ամեն ինչն անլուրջ է, եթե ինչ-որ մեկն ուզում է քաղաքական հայտ ներկայացնել, թող ներկայացնի, զբաղվի իր կուսակցաշինության գործով, ժողովրդի հետ աշխատելով, իշխանությունների ապօրինությունները վեր հանելով, իր էլեկտորատի հետ աշխատելով: Հայաստանի Հանրապետության նախագահները հաղթանակած նախագահներ են՝ Լեւոն Տեր-Պետրոսյանն էլ, Սերժ Սարգսյանն էլ, Ռոբերտ Քոչարյանն էլ, եւ ոչ մեկն իրավունք չունի վաստակ ունեցող մարդկանց ասել, որ իրավունք չունեն մասնակցելու կամ չմասնակցելու:

- Ինչո՞ւ են այդ դեպքում կրկնվում նման հայտարարությունները...

- Ի՞նչ իմանամ՝ ինչու, մարդ է՝ քնից հելել է, ասում է, գնա իրեն հարցրու՝ ինչի՞ ես ասում: Թող գնա գործով զբաղվի: Նախագահներից ամեն մեկն իր էլեկտորատն ունի, իր աջակիցները, իր ընտրազանգվածը: Ինչքա՞ն կարելի է ասել:

- Իսկ գուցե հարցին այլ անկյունի՞ց նայենք, ի՞նչ եք կարծում՝ նախագահներն ինչո՞ւ վճռական պահերին չեն համախմբվում, իրար կողքի կանգնում՝ իշխանությանը հեռացնելու պայքարում, նրանք պառակտված են...

- Ի՞նչ պառակտում, թողեք՝ մարդիկ իրենք որոշեն, պետք չի մտնել նախագահների արանքը, էս հայտարարություններն են հենց պառակտում, թե մեկը պիտի մասնակցի, մյուսը՝ չէ, քավ լիցի, թող ամեն մեկն էլ մասնակցի, իրա գործը դնի, էդ տարիների ընթացքում գլխից վերեւ աշխատանք կա անելու, դուք ինձ դրդում եք, որ ես նման մարդկանց գնահատական տամ, չեմ տա, որովհետեւ համաձայն չեմ, դա լավ տեղ չի տանում, ջրաղացին ջուր է լցնում:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Մեր տեղեկություններով՝ Մոսկվայի եւ մերձմոսկովյան հայ համայնքների ղեկավար Արտյոմ Վարդանյանը մոտ 2 ամիս է՝ կալանավորված է: Պատմեցին, որ նա «Զվարթնոց» օդանավակայանում է ձերբակալվել, որովհետեւ պայուսակում զենք են հայտնաբերել: Մտերիմներն ասում են, որ նա «մոռացել է», որ մոտը զենք կա: Քննչական կոմիտեում քրեական գործ է հարուցվել, 40 օրում գործի նախաքննությունն ավարտվել է, եւ այն ուղարկվել է դատարան: Գործը քննելու է դատավոր Վահե Ջիվանյանը: Այսօր առաջին դատական նիստն է լինելու:

Առաջադրված մեղադրանքում գրված է. «Արտյոմ Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, չպարզված ժամանակահատվածից մինչեւ 2025 թ. հոկտեմբերի 8-ը, ժամը 21:15-ը, խախտելով «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները, իրեն պատկանող ձեռքի պայուսակի մեջ ապօրինի կերպով պահելով՝ չպարզված վայրից «Զվարթնոց» միջազգային օդանավակայան է տեղափոխել չպարզված ժամանակահատվածում եւ հանգամանքներում ձեռք բերված, ինքնաշեն եղանակով պատրաստված, 22L.R./5,6x15,6մմ/ տրամաչափի օղակավոր բոցավառման որսորդական-սպորտային փամփուշտներով կրակելու համար հարմարեցված, ակոսափող հրազեն հանդիսացող, ակոսափող ատրճանակ, որը մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու եւ դրա տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու եղանակով 2025 թ. հոկտեմբերի 8-ին, ժամը 21:30-ի սահմաններում փորձել է Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով, այն է՝ Երեւան-Մոսկվա թիվ 323 չվերթով ապօրինի տեղափոխել Ռուսաստանի Դաշնություն, սակայն իր դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին չի հասցրել, քանի որ ժամը 21:30-ի սահմաններում «Զվարթնոց» օդանավակայանի անվտանգության աշխատակիցների կողմից կատարված՝ Ա. Վարդանյանի զննության ժամանակ հիշյալ ատրճանակը հայտնաբերվել է»: Նրան մեղադրանք է առաջադրվել 335 հոդվածի 1-ին մասով՝ հրազենի ապօրինի շրջանառությունը, որը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով, եւ 44-340 հոդվածի 1-ին մասով՝ հրազենի մաքսանենգության փորձը, որը պատժվում է 3-6 տարի ազատազրկմամբ:

Մեզ չհաջողվեց կապ հաստատել Վարդանյանի պաշտպանի հետ: Համացանցից պարզեցինք, որ Արտյոմ Վարդանյանը մամուլի ուշադրության կենտրոնում է հայտնվել 2021-ին, երբ Աննա Հակոբյանը Ֆեյսբուքում նրա հետ լուսանկար էր հրապարակել եւ գրել. «Հանդիպում «Իմ քայլը» հիմնադրամի լավ բարեկամ, Մոսկվայի եւ մերձմոսկովյան հայ համայնքների ղեկավար Արտյոմ Վարդանյանի հետ»: Սակայն «Իմ քայլի» լավ ընկեր Արտյոմ Վարդանյանը նույն թվականի հունվարի 11-ին Մոսկվայում ՀՀ դեսպանատան դիմաց «Թուրք Նիկոլ» ցույցի գլխավոր կազմակերպիչներից է եղել: Ըստ մամուլի տեղեկությունների, Աննա Հակոբյանը մտադիր է եղել նրան ՌԴ-ում ՀՀ դեսպան նշանակել, ինչի դիմաց նա խոստացել է տարեկան 500 հազար դոլար փոխանցել նրա ֆոնդերին: 2018-ին նա նույնիսկ ցանկացել է Հակոբյանի հիմնադրամի ռուսաստանյան ներկայացուցիչը դառնալ, նրա ֆոնդի շնորհանդեսն է կազմակերպել, սակայն հաջողվել է հավաքել ընդամենը 18 հազար դոլար, ինչը գնահատվել է որպես ձախողում: Գտանք նաեւ նրա 2015 թ. հարցազրույցը «Դե ֆակտո» պարբերականին, որտեղ նշում է. «2004-2006 թթ. ՀՀ ԶՈՒ-ում ծառայության ընթացքում հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության եւ անձնվիրության համար պարգեւատրվել եմ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից»: Ի դեպ, նրա հայրը՝ Մնացական Վարդանյանը, Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքը ղեկավարել է 35 տարի եւ իշխանափոխությունից հետո ընտրություններում պարտվել է:

Նյութերը՝ Աննա ՊԱՊԻԿՅԱՆԻ

ՀՐԴԵՀ

ՏԵՍԱՆ՝ ՍՈՉՉԱՆՅԵՐՈՒՄ ԱՂՄՈՒԿ Է ԲԱՐՁՐԱՆՈՒՄ, ՆՈՐ ՀՐՇԵՋՆԵՐ ՈՒՂԱՐԿԵՑԻՆ

Ճամբարակում, Դիլիջանում, Բերդում անտառային հրդեհները մեծ վնաս են հասցրել արոտավայրերին, անտառներին, շրջակա միջավայրին: Ցավոք, բնական ու տեխնածին աղետներից իշխանությունը դասեր չի առնում: Դասերից առաջինն այն է, որ աղետն ավելի հեշտ է կանխարգելել, հրդեհը՝ սկզբնական փուլում մարել, քան հետեւանքները վերացնել:

Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը մեզ ասաց, որ անցած ուրբաթ օրը՝ նոյեմբերի 21-ին, երբ ինքը Երեւան էր մեկնում, ճանապարհին՝ Ճամբարակի անտառներում նկատել է հրդեհի օջախներում աշխատող, կրակ մարող հրշեջ 2 անձնակազմ: Նա կարծում է, որ Ճամբարակի տարածքում կրակը դրանից 2-3 օր առաջ կարող էր բռնկված լինել: Ճամբարակի անտառներից հրդեհը տարածվել, հասել է Բերդի անտառներ: Ա. Հակոբյանն ասաց, որ հրդեհները մարելու համար Բերդի փրկարարներից բացի աշխատում են նաեւ համայնքապետարանի անձնակազմը, համայնքների վարչական ղեկավարները, Նավուր գյուղի մեծ թվով բնակիչներ:

Իսկ Դիլիջանի բնակիչներն ինձ հայտնեցին. «Ճամբարակում, ամսի 18-ից սկսած, կրակը քիչ-քիչ տարածվեց, ամսի 21-ին մեծ թափով սկսեց վառվել: Մի ամբողջ օր վառվեց՝ էդ ժամանակ պետք է մտածեին, բայց մի հոգի փրկարար չէին ուղարկում: Ամսի 22-ի երեկոյան նոր տեսան, որ ժողովուրդը սոցցանցերում աղմուկ է բարձրացնում, սկսեցին մի քանի մեքենա ուղարկել: Սուտ տեղեկություն գրեցին, որ մարվել է կրակը, բայց տեղացիներն ասում էին՝ կրակն ավելի է շատացել, էդ ժամանակ էր պետք ինքնաթիռ ու ջոկատներ ուղարկել»: Հրդեհները մարելու ժամանակը բաց է թողնվել: Հատուկ պահպանվող տարածք հանդիսացող Դիլիջանի ազգային պարկի տարածքների արբանյակային դիտարկում գոյություն ունի, էկոպարեկային ծառայությունը տարածքը տեսահսկող դրոններ ունի, ինչո՞ւ ժամանակին չեն հայտնաբերվել անտառային հրդեհների օջախները, վերացնելու ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել: Հրդեհների կանխարգելման համար շատ կարեւոր է անտառամերձ բնակչության մեջ բացատրական աշխատանք կատարելը, որ նրանք հնձած արտերի տարածքները՝ խոզանները չայրեն, անտառներում վառած խարույկները հեռանալուց առաջ մարեն, ծխախոտի վառվող ծխուկներն չգցեն: Սակայն այս պարզ բաները հասանելի չեն նույնիսկ՝ պաշտոնյաներին:

Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը նոյեմբերի լույս 26-ի գիշերը հրդեհի վայրից եթեր է մտել, հրդեհի մասին հայտնել՝ ձեռքին վառվող ծխախոտ: Համացանցում կատակում են, որ համայնքապետը ծխախոտը վառվող անտառից է կպցրել: Անտառտնտեսություններում եւ հատկապես՝ Դիլիջանի ազգային պարկում պետք է լինի հրդեհների դեմ գործողությունների պլան-ուղեցույց, անտառտնտեսությունները եւ ազգային պարկը պետք է ունենան հակահրդեհային միջոցներ՝ տեխնիկա, մարդկային ռեսուրսներ, անտառային տեղամասերում պահեստավորված հող, ավազ եւ այլն: Եթե այդպես լիներ, հրդեհների դեմ պայքարն ավելի արդյունավետ կլիներ:

Բերդի Արծվաբերդի անտառտնտեսության եւ Դիլիջանի ազգային պարկի անտառներում վերջին շրջանում մեծածավալ ապօրինի հատումներ են կատարվել, որոնց, ըստ մեր տեղեկությունների, մասնակցություն են ունեցել նաեւ այդ անտառների, ազգային պարկի պահպանությանը կոչված որոշ էկոպարեկներ: Տավուշի բնակչությունը կարծում է, որ անտառներում հրդեհները կարող էին դիտավորության հետեւանք լինել, որ ապօրինի հատված ծառերի բներն այրվեն, հատումներից անտառին հասցված վնասը վերագրվի հրդեհին: Նոյեմբերի վերջին բռնկված հրդեհների պատճառների ու մեղավորների մասին հազիվ թե ճշմարտությունն իմանանք, քանզի Հայաստանում նման դեպքերից հետո սովորաբար լիարժեք հետաքննություն չի կատարվում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱԽԸ ԹԵՐԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆ Է

Այր Աթոռում կայացած եպիսկոպոսաց ժողովը, քննարկելով Եկեղեցու շուրջ ստեղծված վիճակը, բավականին կոշտ դիրքորոշում դրսեւորեց՝ պատարագների կարգի խախտումները չեն ներվելու, վերջին պատարագներն արած քահանաները պետք է զղջումի խոսքեր ասեն, հակառակ դեպքում կարգալույծ կարվեն: Հիմա բոլորը սպասում են նրանց զղջման հայտարարություններին:

Կարգազանց սրբազաններն էլ ժողովի ժամանակ դատապարտվել են սրբազանների կողմից, որ իրենց ներկայությամբ է Եկեղեցու կանոնակարգը խախտվել: Ըստ ամենայնի, ՀԱԵ վերնախավը եւ Վեհափառը հասկացել են, որ կոմպրոմիս չի կարող լինել, այս զիջումները նշանակում են Եկեղեցու կազմաքանդում եւ Վեհափառի հրաժարական: Սաղմոսավանքի հոգեւոր հովիվ **Տեր Փառեն քահանա Առաքելյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով Փաշինյանի մասնակցությամբ «պատարագների» շարունակությանը, ասաց. «Դժվարանում եմ ասել, թե ինչ կարող է տեղի ունենալ այդ ամենից հետո, ամեն դեպքում վստահ եմ, որ եկեղեցու համար վատ բան չի կարող լինել, որովհետեւ եկեղեցին Քրիստոսի մարմինն է, եկեղեցին վեմ է. Հայ առաքելական եկեղեցին դարեր շարունակ կանգուն է մնացել եւ պետք է մնա կանգուն: Եկեղեցին երբեք, երբեք չի ընկնելու»: Ինչպե՞ս եք վերաբերվում, որ պատարագների ժամանակ զեղչվում է Վեհափառի անունը: «Իմ վերաբերմունքը, բնականաբար, բացասական է, դա քահանայի՝ մարդու ցանկությամբ չի կարող լինել: Քահանան չի կարող ինքը որոշել՝ արտաբերե՞լ Վեհափառի անունը, թե՞ ոչ: Դարեր շարունակ այն զետեղված է եղել խորհրդատետրի մեջ, ուսումնասիրվել է մեր հայրերի կողմից, եւ մենք պարզապես պարտավոր ենք պատարագի այդ հատվածն իրականացնել, ու, առհասարակ, հոգեւորականը չունի իրավունք՝ ցանկացած հատված պատարագից զեղչելու: Մենք ամեն անգամ տալիս ենք թեմի առաջնորդի անունը՝ դա պարտադիր է, այն աղոթք է Վեհափառի համար, ինչպես նաեւ՝ թեմերի առաջնորդների համար, ինչից հետո աղոթք՝ հայրենիքի, ժողովրդի, եւ դա մենք պարտավոր ենք անել: Հայ առաքելական եկեղեցին կանգուն է: Մենք խիստ բացասական վերաբերմունք ունենք զեղչումներին: Որեւէ մեկն իր կյանքում չի կարող պախարակել եկեղեցին: Այն սրբություն սրբոց է: Եկեղեցու կառույցն օծված է: Այն ոչ ոք չի կարող վնասել: Թող եկեղեցի գնան բոլորը, թող աղոթեն բոլորը»: Անգամ նրանք, ովքեր ցանկանում են պառակտե՞լ եկեղեցին, եթե կրկին զեղչվի Գարեգին Բ-ի անունը, նրանք կարգալույծ կարվե՞ն: «Երեկվա եպիսկոպոսաց ժողովի հայտարարությունը տվել է այդ ամենի պատասխանը, ամեն ինչ հստակ է: Ինչ վերաբերում է այդ խմբի՝ եկեղեցի գնալու նպատակին, ապա դա իրենց խնդիրն է, սակայն կրկնեմ՝ եկեղեցին ոչ ոք չի կարող պառակտել: Իսկ նա, ով դուրս է գալիս եկեղեցուց, կորցնում է ինքը, եկեղեցին երբեք չի կորցնում: Ցավ ապրում է, ափսոսանք ապրում է, սակայն կորցնում է նա, ով դուրս է գալիս եկեղեցուց: Կամ մարդ, որ անմեղ է, աշխարհում չկա այդպիսի մարդ, սակայն Աստվածաշունչն ասում է՝ սկզբից տես քո աչքի գերանը, հետո նոր՝ դիմացինի աչքի շյուղը: Ամեն մարդ պետք է սկզբում իրեն նայի, հետո նոր դիմացինի մասին դատողություններ անի»: Բացառո՞ւմ եք, որ կալանավորումներով, քրեական գործերով եկեղեցականների շրջանում վախի մթնոլորտ կստեղծեն եւ որոշ հոգեւորականների կտանեն իշխանական դաշտ. «Աստվածաշունչն ասում է՝ վախը թերահավատության նշան է: Մենք հավատում ենք Աստծուն եւ չենք վախենում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Արսեն Ամյանը կալանքից ազատվել է, Խաչատրյանների սրճարանը՝ փակվել

Երեւանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության նախկին պետ Արսեն Ամյանը, որը մինչեւ 2018 թվականը քաղաքապետարանի հնաբնակներից էր եւ Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո մեկ տարի աշխատեց նույն պաշտոնում, օգոստոսի 29-ին ձերբակալվել էր: Այդ օրը Հակակոռուպցիոն կոմիտեից «Հրապարակ»-ի հարցին ի պատասխան հաստատել էին, որ իրենց մոտ քննվող քրեական վարույթի շրջանակներում պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանքով ձերբակալվել է Երեւանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության նախկին պետը: Նա մեղադրվում էր այն բանում, որ դիտավորությամբ միջոցներ չի ձեռնարկել Մոսկովյան փողոցում գտնվող «Սանտաֆե» սրճարան-ռեստորանի շենքը Երեւան համայնքի գույքային հաշվեկշռում հաշվառելու ուղղությամբ: Ի դեպ, նշված սրճարան-ռեստորանը պատկանում է ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի որդիներին:

Այդ ժամանակ Արսեն Ամյանին դատավոր Արամ Գրիգորյանը կալանավորել էր, պաշտպանական կողմը որոշումը բողոքարկել էր Վերաքննիչ դատարան: Եվ ահա տեղեկացանք, որ Ամյանի խափանման միջոցը փոխվել է բացակայելու արգելքի, գործն էլ իրավապահները ափալ-թափալ քննել են եւ ուղարկել դատարան՝ քննության. այն մակագրվել է Հակակոռուպցիոն դատարանի նախագահ Խաչիկ Ղազարյանին: Գործով մեղադրյալի կարգավիճակ ունի նաեւ Երեւանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստրի պաշտոնը զբաղեցրած (պաշտոնավարումը կասեցված է) Գայանե Մեժլումյանը, որի նկատմամբ խափանման միջոցը եւս բացակայելու արգելքն է: Նրա պաշտպան **Սմբատ Մինասյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ իր պաշտպանյալը մեղադրանքը չի ընդունում. «Ինձ համար առնվազն անհասկանալի է մեղադրանքը, կադաստրի աշխատողին որ պատահականության սկզբունքով թուղթ են տալիս, մուտք է անում, դա չի կարող 308 հոդված լինել, կարող է լինել անփութություն, բայց ոչ դա: Սա աբսուրդ է ուղղակի, իրենը գույքի գրանցման հարց է եղել, բայց գրանցումը ճիշտ է արվել»:

Հարց է առաջանում՝ իշխանությունը վերցնելո՞ւ է «Սանտաֆե» սրճարանի տարածքը եւ կասեցնելո՞ւ է սրճարանի գործունեությունը: Փորձեցինք կապ հաստատել, սրճարանի ինքնապատասխանիչն ասաց՝ սրճարանն ավարտել է սեզոնային աշխատանքը, աշխատանքները կվերսկսվեն հաջորդ տարի: 2026 թվականին քաղաքապետարանը կորոշի՝ երկարաձգե՞լ վարձակալության պայմանագիրը խաչատրյանների հետ, թե՞ ոչ, թեպետ, ըստ օրենքի, առանց վարձակալի համաձայնության չեն կարող պայմանագիրը չեղարկել եւ տարածքը վերցնել, քանի որ այն անշարժ գույքով ծանրաբեռնված է:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՇՈՒՏ

ՀԱԿԱ-ՀԷՑ-ԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐԱՐԸ

Նախորդ ողջ օրը վարչապետի պաշտոնը զբաղեցնող Փաշինյան Նիկոլի եւ նրա կողմից ՀԷՑ ՓԲԸ-ի ժամանակավոր կառավարիչ նշանակված Պետրոսյան Ռոմանոսի մասնակցությամբ պետական մակարդակով անցկացվել է իսկական շոու: Զույգը համարյա 1 ժամ ռմբահարում էր հանրությանը՝ ՀԷՑ ՓԲԸ-ի վերաբերյալ բացասական բնույթի փաստեր հրապարակելով: Նպատակը պարզ էր՝ ցույց տալ, թե ինչպիսի հանցագործ կազմակերպություն է այն: Կարծում եմ, որ ազգաբնակչությանը մանիպուլացնելուն միտված այդ հեղեղը որոշակիորեն կատարել է իր գործը, որովհետեւ շարքային քաղաքացու համար շատ դժվար է կասկածել թվային տվյալների ճշմարտացի լինելուն, եթե ինքն ընդդիմադիր չէ կամ էլ չունի ոչ հավես եւ ոչ էլ կարողություն՝ ստուգելու վարչապետ կոչեցյալի կամ նրա կամակատարի հրապարակած տվյալները: Բայց երբ խոսքը գնում է որեւէ հանգամանքի մասին, ապա այն բացահայտելը դժվարություն չի ներկայացնում, ինչը եւ տեղի ունեցավ հակա-ՀԷՑ-ական գործընթացի հերթական արարում:

Այսպես, ՀԾԿՀ նախագահ Մ. Մեսրոպյանը հայտարարել էր ՀԷՑ-ի՝ 2018-2024 թթ. տվյալների կորստի մասին եւ դրա վրա մի ողջ մեղադրանք էր կառուցել, ինչը կրկնեց նաեւ նրան այդ պաշտոնին նշանակած վարչապետը: Պարզվեց, որ այս տարվա հունվարի 2-ին՝ ծրագրային ինչ-ինչ խնդիրներով պայմանավորված, իսկապես նման բան է տեղի ունեցել, ինչն արագ բացահայտվել է, եւ երկու օր անց հարցը կարգավորվել է: Բայց «ճշմարտախոս» Մեսրոպյանը, իհարկե, «մոռացել» էր վերականգնելու վերաբերյալ հիշատակել: Դա հաստատել է անգամ Փաստերի ստուգման հարթակը (FIP), որի լրագրողը դիմել էր ՀԷՑ-ին եւ ստացել էր 2018-2024 թթ.-ի իրեն հետաքրքրող ողջ տեղեկատվությունը: Այդ երեւույթի առումով մի թեւավոր խոսք կա՝ թերի խոսքը կեղծիքից ավելի վատ է (հեղինակ՝ ռուս արձակագիր Մ. Սալտիկով-Շչեդրին, 1826-1889): Ինչեւէ, կեղծիքի վրա իշխանության եկած ու դրանով անընդհատ շարժվող իշխանությունն ինչո՞ւ պիտի տվյալ դեպքում չդիմեր հերթական կեղծիքին:

Դրանից մեկ-երկու օր առաջ հանձնաժողովի նախագահ Մեսրոպյանը ՀԷՑ-ի մասին մեկ այլ դրվագում էլ էր աչքի ընկել: «Մեր ձեւով» շարժման համակարգող Կարեն Կարապետյանն այս տարվա հունիսին, երբ ՓԲԸ-ն դեռեւս բռնազավթված չէր, հայտնել էր, որ ՀԾԿՀ-ում առաջարկել են 7%-ով նվազեցնել էլեկտրաէներգիայի սակագինը, ինչը «պետական մտածողությամբ օժտված» հանձնաժողովականները մերժել են՝ բացի ընդդիմադիր անդամից: Իսկ հանձնաժողովի նախագահն էլ էլեկտրաէներգիայի սակագնի նվազեցման առաջարկը գնահատել է որպես թույլ եւ մանիպուլյատիվ: Որպես հիմնավորում՝ ներկայացրել է հաշվարկի արդյունք, ըստ որի՝ նվազեցումը կազմելու էր ընդամենը 0,02 դրամ: Որպես մաթեմատիկայի հետ դպրոցական տարիներից բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող անձ, չնայած բարձրագույնս հումանիտար էր, ես էլ հաշվարկեցի ու ստացա ավելի քան 3 դրամի նվազեցում:

Բայց քանի որ Մեսրոպյանի ներկայացրածի ու իմ հաշվարկի տարբերությունը ոչ թե, ասենք, 0,02 դրամ էր, այլ՝ 1500 անգամ ավելի, ստիպված նայեցի, թե ինչպես կարող էր ինքը ստանալ այդ թիվը: Պարզվեց, որ ընդդիմախոսներին մանիպուլյացիայի մեջ մեղադրող անձը կատարել է մանիպուլյատիվ երկու արարք: Նախ, 0,002 թիվը ստացել է ոչ թե բնակչության մեծամասնության համար սահմանված սակագնից՝ 44,98 (ցերեկային) եւ 34,98 (գիշերային), այլ ընդամենը շուրջ 11% կազմող չունեւորների համար հաշվարկվածից՝ համապատասխանաբար 29,99 եւ 19,99: Այսինքն՝ 29,99*7/100-ի (պատասխանը՝ 2,0993) եւ ոչ թե 44,98*7/100-ի (պատասխանը՝ 3,1486): Եվ երկրորդ. սակագնի փոփոխությունը հաշվարկվել է ոչ թե 1 կվտ/ժամ-ի առումով, որովհետեւ թե՛ 29,99-ը եւ թե՛ 44,98-ը ներկայացված են հենց այդ տարբերակով: Այլ, չգիտես ինչու, դրանից 1000 անգամ պակաս 1 կվտ/ժամ-ի առումով: Չնայած, ինչո՞ւ չգիտենք, լավ էլ գիտենք՝ աննորմալ փոքր թիվ ներկայացնելու նպատակով:

Ինչպես երեւում է, մանիպուլյացիայով զբաղվել է ոչ թե ՀԷՑ ՓԲԸ-ի նախկին ղեկավարությունը, այլ՝ քառօրյա մարտերի հերոս Աբաջյանի կեղծ պապի կեղծիքով իշխանության եկած խմբակը եւ տվյալ դեպքում՝ դրա ներկայացուցիչը ՀԾԿՀ-ում: Այնպես որ, ինչպես իշխանություն են գրավել, այդպես էլ շարունակում են այդ ոգով շարժվել, ինչը նորմալ երկրում անընդունելի կլիներ ու անմիջապես կընդհատվեր, բայց քանի որ սա Հայաստանն է, այն էլ՝ «ժողովրդավարական», ապա դա կշարունակվի այնքան ժամանակ, որքան պետության ղեկավարի պաշտոնում կմնա Նիկոլը, որովհետեւ, երբ որեւէ անձ դիմում է կեղծիքի, իսկ հետո էլ ստիպված է լինում այն հիմնավորել, ապա այլեւս չի կարողանում ազատվել ստերի կծիկից, եթե նույնիսկ շատ ցանկանա: Բայց ի դեմս Նիկոլի ձեւավորած իշխանության՝ մենք ունենք այնպիսի ղեկավարություն, որ բացարձակ չի ցանկանում ազատվել դրանից, որովհետեւ այդ դեպքում չեն կարողանալու մարդկանց համոզել, թե ինչ գործ ունեն իրենք կառավարության շենքերում:

ՀԳ. *Նույն օրը Նարեկ Կարապետյանն ուղիղ եթերում պատասխանեց թվական տվյալների մանիպուլյացիաներին եւ կեղծիքներին, որոնք հնչել են ՀԷՑ-ի նկատմամբ, եւ հանգամանալից ներկայացրեց, թե ինչու են ավելի թանկ սարքեր գնել, ինչպես եւ ինչու է տեղի ունեցել տվյալների հետ կապված երկօրյա խափանումը, եւ ինչպես են դրանք վերականգնվել: Պետրոսյան Ռոմանոսը դեռ շատ պետք է ջանա, որ իրական տվյալներ հայտնաբերի եւ տիրապետի ՀԷՑ կառավարչի գործի նրբություններին:*

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ ԳՈՐԾԻ ՎՐԱ ԵՆ ԲՌՆՈՒՄ

Փաշինյանը Նիկոլ չէր լինի, եթե չօգտագործեր ընդդիմության եւ ընդդիմախոսների դեմ պայքարի նույնիսկ ամենաթույլ, գրեթե աննշան հնարավորությունները: Ահավասիկ, որպեսզի արդարացնի հայ-ադրբեջանական հակամարտության իբր թե կարգավորման նպատակով մի խումբ ավանակների՝ Բաքու գործուղելը, հրապարակ է նետում մի թեզ, թե ովքեր դեմ են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, կամ օտարերկրյա գործակալներ են, կամ՝ ապուշ: Այստեղից հետեւում է, որ նրանք, ովքեր դեմ չեն հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը, չեն կարող օտարերկրյա գործակալ կամ ապուշ լինել: Բայց այդպե՞ս է, արդյոք:

Եկեք խնդիրը քննարկենք օրինակներով: Արման Բաբաջանյան, Ստյոպա Սաֆարյան, Լեւոն Շիրինյան, Լեւոն Բարսեղյան, Արթուր Սաքունց, Արամ Զավենի Սարգսյան… Այս ծաղկաբույլը, որքան ինձ հայտնի է, դեմ չէ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, բայց, իմ համեստ կարծիքով, եւ գործակալների, եւ ապուշների ծաղկաբույլ է: Նույնը կարող եմ ասել Բաքու մեկնած ավանակների խմբի մասին: Տղերք ջան, հանկարծ չնեղվեք, բայց դուք, ինչպես համալսարանում մեր ֆիզկուլտուրայի դասախոս ընկեր Դերձյանն էր ասում, իսկի տղա էլ չեք: Դուք նույնիսկ չեք պատկերացնում, թե ինչ ասել է՝ կարգավորել հարաբերությունները միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միավորների, այս դեպքում՝ երկու պետությունների միջեւ: Այն, ինչ դուք փորձում եք կարգավորել, ավելին չէ, քան տիրոջ եւ ծառայի հարաբերությունների կարգավորումը, հաղթողի ու պարտվածի հարաբերությունների կարգավորումը, հովվի եւ հոտի հարաբերությունների կարգավորումը: Եթե մի փոքր ավելի վեր բարձրանանք եւ խնդիրը դիտարկենք ՀՀ կառավարության եւ ՀՀ ԱԺ մակարդակներում, նույն պատկերը կստանանք, միայն թե տարբեր անուն-ազգանուններով: Նիկոլ Փաշինյան, Միհեր Գրիգորյան, նախարարաց ու մարզպետաց ողջ դասը, Ալեն Սիմոնյան, Ռուբեն Ռուբինյան եւ այլք: Եվ ի՞նչ, եթե այս ծաղկաբույլը հայտարարում է, որ դեմ չէ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, ուրեմն չի՞ կարող օտարերկրյա ագենտների ու ապուշների ծաղկաբույլ լինել: Բա արդեն յոթ տարի է՝ ինչի՞ ականատեսն ենք մենք՝ բոլորս:

Եվ կամ, պարոն Փաշինյան, որ համարվում ես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման ջատագով, ինչո՞ւ մինչ այս պահը ոչինչ չես արել այդ ուղղությամբ: Այսինքն, շատ բան ես արել, բայց ինչո՞ւ ոչինչ չի կարգավորվել մինչ այս պահը: Եղբայր, ամեն ինչ տվեցիր, շարունակում ես տալ, շարունակում ես բավարարել Իլհամ Ալիեւի, ձեռի հետ էլ՝ Էրդողանի, Թրամփի, Պուտինի պահանջները… Եվ այդ ամենը՝ ՀՀ սուվերենության ու մեր ժողովրդի իրավունքների հաշվին: Սա ի՞նչ կարգավորում է, որ դու, փոխանակ կանխելու, մի բան էլ շարունակում ես «կարգավորել»: Պարզ չէ՞, որ պետության հարցերն այսպես կարգավորող ղեկավարը կամ գործակալ է, կամ՝ ապուշ:

Հիմա հարցին մեկ այլ տեսանկյունից մոտենանք: Հայաստանում չես գտնի գեթ մեկ մարդ, որ դեմ լինի հարեւանների հետ հարաբերությունները կարգավորելուն: Ո՛չ ժողովրդի, ո՛չ ընդդիմության, ո՛չ իշխանության, ո՛չ Եկեղեցու մեջ, ո՛չ այլուր… Մարդ արարածը, առհասարակ, եթե նա գործակալ կամ ապուշ չէ, չի կարող դեմ լինել հարեւան երկրի հետ հարաբերությունների կարգավորմանը: Այստեղ նկատենք նաեւ, որ մեր դեպքում խոսքը դեռ հայ-ադրբեջանական շարունակվող պատերազմը դադարեցնելու մասին է, Ադրբեջանի նվաճողական ախորժակը փակելու: Եվ այս իրավիճակում Փաշինյանն ինձ ասում է՝ եթե դեմ ես այդ երկրի հետ հարաբերությունների կարգավորմանը, ուրեմն կամ գործակալ ես, կամ՝ ապուշ: Այ քեզ հետաքրքիր իրավիճակ… Պարոն Փաշինյան, ես իմ բնույթով խաղաղասեր մարդ եմ եւ երբեք դեմ չեմ եղել հարաբերությունների կարգավորմանը: Պարզապես այն, ինչ դուք եք անում հարաբերությունների կարգավորման անվան տակ, միանգամայն այլ բան է: Նաեւ մի մոռացեք, թե ով լուծարեց հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման Մինսկի խումբը: Եթե դեմ չէիք կարգավորմանը, ինչո՞ւ լուծարեցիք, վմա՛ռ էին կարգավորում: Այո՞… Իսկ դուք, ինչ է, ձեր զրոյական կետից սկսեցիք ավելի՞ լավ կարգավորել: Տեսանք, չէ՞, ինչ արիք, ինչ բերիք Արցախի գլխին, Կիրանցի գլխին, Ջերմուկի գլխին, Սեւ լճի գլխին, Գորիս-Կապան, Տավուշ-Բագրատաշեն ճանապարհի գլխին, Հայաստան-Իրան սահմանի գլխին: Մարդ չի հասկանում արդեն՝ սա կարգավորո՞ւմ է, թե՞ այն դեպքն է, երբ տեսնում ես՝ էլ ճար չկա, թուլանում ու հաճույք ես ստանում:

ՀԳ. *Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանն իրականում դեմ են Նիկոլ Փաշինյանը եւ նրա փոքրիկ խմբակը: Պատճառը պարզ է՝ նրանք կարող են մնալ իշխանության բացառապես խառնակչության եւ Ադրբեջանի հանդեպ մեր ժողովրդին ահուսարսափ ներարկելու հաշվին: Նրանց բոլոր քայլերն ուղղված են պատերազմական վիճակը ձգելուն եւ այդ ընթացքում թե՛ Ադրբեջանի ու Թուրքիայի եւ թե՛ ԱՄՆ-ի ու արեւմտյան այլ խաղացողների շահերի սպասարկմանը: Եվ, ուրեմն, օտարերկրյա գործակալներին ու ապուշներին պետք է փնտրել ոչ թե ընդդիմության ու ժողովրդի մեջ, այլ՝ իշխանությունների, որոնց մենաշնորհն է՝ կարգավորել հարաբերությունները հարեւանների հետ եւ ապահովել երկրի անվտանգությունը:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՎԱՏԻԿԱՆ-ԲԱԲՈՒ «ՍԻՐԱԽԱՂԸ» ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՀՌՈՄ

Վերջին շրջանում ավելի ու ավելի տարակուսելի է դառնում քրիստոնեական աշխարհի հոգեւոր մայրաքաղաք Վատիկանի ջերմ վերաբերմունքը քրիստոնյաներին, հատկապես՝ հայ քրիստոնյաներին կեղեքող, նրանց նկատմամբ էթնիկ եւ ցեղասպանական քաղաքականություն վարող, իր երկրի տարածքում, ինչպես նաեւ օկուպացված Արցախում պատմամշակութային հին կոթողները, եկեղեցիները եւ նույնիսկ հայկական գերեզմանները ոչնչացնող պետության՝ Ադրբեջանի նկատմամբ:

Շաբաթներ առաջ Հռոմի պապը եւ այլ բարձրաստիճան հոգեւորականներ Վատիկանում ընդունել էին Ադրբեջանի փոխնախագահ, երկրի առաջին տիկին Մեհրիբան Ալիեւային: Ադրբեջանական ՁԼՄ-ները միաբերան պնդում էին, թե ջերմ մթնոլորտում կայացած հանդիպման ժամանակ բարձր է գնահատվել Սուրբ Աթոռի եւ Բաքվի համագործակցությունը, նախանշվել են զարգացման նոր ծրագրեր: Օրեր առաջ էլ ալիեւյան ռեժիմի քարոզչակայքերը, նենգափոխելով իրողությունը, գրել էին, թե իբր Վատիկանում Հռոմի պապն ընդունել է Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար, Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Ալահշուքյուր Փաշազադեին եւ իբր նրանից հրավեր ստացել՝ այցելել Ադրբեջան: Մինչդեռ «Հրապարակ»-ի լրագրող Լուսինե Պետրոսյանը լրագրողական հետաքննությամբ պայթեցրել էր նաեւ քարոզչական այդ «փուչիկը». Սուրբ Աթոռի կայքում ոչ մի հաղորդագրություն չկար այդ մասին: Ավելին, Փաշազադեն, թերեւս, սեփական նախաձեռնությամբ մոտեցել էր Սուրբ քահանայապետին՝ ընդհանուր լսարանի առջեւ հերթական ելույթի ժամանակ: Բայց հարցն այստեղ միայն Բաքվի տեղեկատվական նենգափոխությունը չէ:

Եվ ահա, պարզվում է՝ Վատիկան կատարած պաշտոնական այցի ընթացքում Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հանդիպել է Սուրբ Աթոռի պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների քարտուղար, արքեպիսկոպոս Պոլ Ռիչարդ Գալագերի հետ: Այս մասին հայտարարություն է տեղադրվել Ադրբեջանի ԱԳ նախարարության X սոցիալական հարթակի էջում: Ըստ այդմ, կողմերը քննարկել են Ադրբեջանի եւ Վատիկանի միջեւ զարգացող հարաբերությունները՝ բարձր գնահատելով կառուցողական երկխոսությունը, փոխադարձ հարգանքը եւ միջկրոնական փոխըմբռնման եւ համաշխարհային խաղաղության համար նախաձեռնությունների խթանման գործում ակտիվ համագործակցությունը: Նաեւ ընդգծել են բարձր մակարդակի շփումների շարունակականության կարեւորությունը՝ քաղաքական երկխոսության հետագա ամրապնդման, մշակութային եւ մարդասիրական կապերի ընդլայնման, ինչպես նաեւ՝ համատեղ միջազգային նախագծերի առաջխաղացման համար:

«Կողմերը քննարկել են Վատիկանի տարածքում կրոնական եւ մշակութային ժառանգության պահպանման եւ վերականգնման հաջողված նախագծերը, որոնք իրականացվել են Հեյդար Ալիեւի հիմնադրամի աջակցությամբ՝ նշելով դրանց նշանակալի ներդրումը համաշխարհային կրոնական եւ մշակութային ժառանգության պահպանման գործում: Ընդգծվել է Ադրբեջանի վաղեմի հանձնառությունը կրոնական հուշարձանների պաշտպանությանը եւ բազմամշակութայնության խթանմանն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով»,- ասվում է Ադրբեջանի ԱԳՆ հաղորդագրության մեջ, որն ապացուցում է վերեւում վկայակոչվող տարակուսելի օրինաչափությունը: Նշվում է նաեւ, որ «հանդիպմանը անդրադարձ է եղել Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացում արձանագրված առաջընթացին, Վաշինգտոնի գագաթնաժողովում ստորագրված պատմական համաձայնագրերի իրականացմանը, ինչպես նաեւ՝ «օկուպացիայից» ազատագրված տարածքներում վերականգնողական եւ շինարարական աշխատանքներին»:

Իրականում, այս պատմության ակունքները հեռվից են գալիս. 2024 թվականի մարտի 27-ին իտալական Irpmedia.irpi.eu կայքում հրապարակված ծավալուն հոդվածում՝ «Ինչպես Վատիկանն օգնեց՝ օրինականացնել Ալիեւի միապետությունն Ադրբեջանում» վերնագրով, Սիմոնե Զոպելարոն բացահայտել էր Վատիկանի ադրբեջանամետ կողմնակալությունը ֆինանսական նվիրատվությունների պատճառով, չնայած Հայաստանը քրիստոնյա պետություն է, իսկ Ադրբեջանը՝ իսլամական: 2020 թ. փետրվարի 22-ին Ադրբեջանի բռնակալ ղեկավար Իլհամ Ալիեւը եւ նրա կինը՝ փոխնախագահ Մեհրիբան Ալիեւան, պետական այցով ժամանել էին Վատիկան: Նրանց պաշտոնապես ընդունել էին այն ժամանակ Հռոմի Ֆրանցիսկոս պապը (այժմ՝ լուսահոգի), պետքարտուղար Կարդինալ Պիետրո Պարոլինը եւ միջպետական հարաբերությունների քարտուղար արքեպիսկոպոս Պոլ Ռիչարդ Գալագերը: Ալիեւան Վատիկան էր եկել, որպեսզի ստանար Սուրբ Աթոռի կողմից աշխարհականներին շնորհվող բարձրագույն պարգեւը՝ «Մեծ խաչը»: Այդ պարգեւն առաջարկում են թեմական եպիսկոպոսները՝ որպես գնահատանքի եւ երախտագիտության նշան Եկեղեցուն կամ հասարակությանը մատուցած ծառայությունների համար, եւ այն վերապահված է պետությունների ղեկավարներին, նախարարներին, դեսպաններին եւ թագավորական ընտանիքի անդամներին:

Սակայն հայտնի է, որ Ադրբեջանի նկատմամբ Վատիկանի նման «հետաքրքրության» շարժիչ ուժը Հեյդար Ալիեւի հիմնադրամի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունն է: Այն ժամանակ փորձագիտական հանրությունը փաստեց. վախենալով Ադրբեջանի նվիրատվությունների կորստից՝ Վատիկանը դժկամությամբ է թույլ տվել Բաքվի հասցեին որեւէ քննադատություն, հատկապես՝ սեփական հոգեւորականների կողմից: Օրինակ, «Հայր Ժորժ-Անրի Ռույսենը հեռացվել է Հայրապետական արեւելյան ինստիտուտից, քանի որ նա քննադատում էր նրանց, ովքեր չէին ցանկանում օգտագործել «Հայոց ցեղասպանություն» ձեւակերպումը»: Նույնիսկ 2020 թվականի պատերազմի ժամանակ «եկեղեցին դուրս չեկավ «բոլոր ներգրավված կողմերին եւ միջազգային հանրությանն» ուղղված «զենքերը վայր դնելու» չափավորության ընդհանուր կոչերից այն կողմ»:

Իսկ 2023 թվականի հոկտեմբերի 24-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն առաքելական նվիրակ Խոսե Ավելինո Բեթենկուրտից ստացավ նույն պարգեւը, որը երեք տարի առաջ տրվել էր Ադրբեջանի փոխնախագահ Ալիեւային: Այնուամենայնիվ, կար մի էական տարբերություն. մինչ Ալիեւան իր մրցանակը ստացավ անմիջապես Հռոմի պապից, Փաշինյանին այն հանձնեց առաքելական նվիրակը: Կային նաեւ այլ տարբերություններ, որոնք «օգնեցին ամրապնդել Ալիեւների ընտանիքի իշխանությունը, չնայած Արցախում մարդու իրավունքների խախտումներին»: Ընդհանուր առմամբ, Վատիկան-Բաքու խայտառակ եւ ամոթալի «սիրախաղը» շարունակվում է՝ վիրավորելով ոչ միայն հայության, այլեւ քրիստոնեական արժեքներ դավանող աշխարհի կրոնական եւ հումանիստական զգացմունքներն ու արժանապատվությունը:

Արա ԱԼՈՅԱՆ

ԱՄԻՍՆԵՐ ԵՆ ԾԱԽՍԵԼ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԿԱՅՔԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի 2025թ. հուլիսի 9-ի որոշումը, որով Դիլիջան համայնքի 2025 թ. բյուջեով նախատեսված «Ընտանիքի անդամներ եւ զավակներ» նախահաշվից մեկ միլիոն ՀՀ դրամ է փոխանցվել «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ի «Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի հաշվեհամարին՝ Դիլիջանի համայնքապետարան դիմած նորածին երեխաների ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու նպատակով:

30 նորածինների ընտանիքներին ցուցաբերվել է 20-50 հազար դրամ աջակցություն: Համայնքի ղեկավարի որոշման մեջ առանձին փաստաթղթով հրապարակված են նորածինների մայրերի անուն-ազգանունները, անձնագրերի եւ ՀԾՀ-ի՝ հանրային ծառայության համարանիշների տվյալները: Դիլիջանի համայնքապետարանի կողմից նորածինների մայրերի անձնական տվյալների այս անթույլատրելի հրապարակման կապակցությամբ դիմել էի ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ Գրիգոր Ներսիսյանին: Հարց էի բարձրացրել, թե ինչու գործակալությունն այդ առթիվ վարույթ չի իրականացնում, միջոցներ չի ձեռնարկում՝ չէ՞ որ մարդկանց անձնական տվյալների գաղտնիությունն է խախտվել: Դրանից հետո գործակալությունն օգոստոսի 25-ին վարույթ էր հարուցել:

Ամիսներ անց՝ նոյեմբերի 19-ին, Գ. Ներսիսյանին նոր հարցում ուղարկեցի. «2025 թվականի օգոստոսի 25-ին հարուցվել է վարչական վարույթ, անցել է 3 ամիս, ի՞նչ եղավ այդ վարչական վարույթի ընթացքը»: Գործակալության պետը պատասխանել է. «Գործակալությունում 2025 թվականի օգոստոսի 25-ին հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունված 2025թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ Դիլիջանի համայնքապետարանից պահանջվել է դադարեցնել Դիլիջանի համայնքապետարանի // (https: dilijancity.am/) պաշտոնական համացանցային կայքում՝ Դիլիջան համայնքի ղեկավարի 2025թ. հուլիսի 9-ի թիվ 513 որոշմանը կից փաստաթղթում հրապարակված անձնական տվյալների մշակումը: Վարչական ակտի պահանջի կատարման փաստը պարզելու նպատակով, Գործակալության կողմից ուսումնասիրվել է վերոնշյալ կայքը եւ պարզվել, որ վերոնշյալ կայքում հրապարակված Դիլիջան համայնքի ղեկավարի 2025թ. հուլիսի 9-ի թիվ 513 որոշմանը կից փաստաթղթում ներառված են միայն որոշմամբ աջակցություն տրամադրված քաղաքացիների անուն-ազգանունները եւ գումարի չափը: Միեւնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների շրջանակներում անձի անունը եւ ազգանունը դասվում են հանրամատչելի անձնական տվյալների շարքին»:

Փաստորեն, Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը երկար ամիսներ է ծախսել պարզ բանի համար՝ դիմումիս հենքով վարույթ հարուցելու համար, որպեսզի Դիլիջանի համայնքապետարանին պարտադրեն՝ համայնքապետարանի կայքից հեռացնել դրամական օգնություն ստացած նորածին մայրերի անձնագրերի եւ ՀԾՀ-ի՝ հանրային ծառայության համարանիշների տվյալները:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐ

ՎԱՐՉԱՊԵՏ ՉԷ՝ ՈՎ ՈՒԶՈՒՄ Է ԼԻՆԻ, ԱՌԱՆՑ ԾՆՈՂԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԻ ԿԱՐԵԼԻ

Երկակի ստանդարտներով առաջնորդվող իշխանությունը շարունակում է խոսել մարդու իրավունքների մասին, միաժամանակ շարունակաբար խախտելով մարդու իրավունքները: Մի տեղ կանանց իրավունքներից են խոսում, սակայն Հայաստանում կին քաղբանտարկյալներ կան, մի տեղ լիբերալ արժեքներից են ճամարտակում, սակայն սեփական թիմակցի անձնական նամակագրությունները եւ սեռական կյանքը դարձնում են հանրային քննարկման առարկա, մի տեղ խոսում են արդար ու թափանցիկ ընտրություններից, բայց ադմինիստրատիվ ռեսուրսով ու վախի մթնոլորտով ընտրություններ են կեղծում, իսկ ընտրություններից հետո ընտրված քաղաքապետերին կալանավորում են:

Բայց առավել հաճախ խոսում են երեխաների իրավունքների պաշտպանվածության կարեւորության մասին, սակայն Հայաստանում երեխաների իրավունքները նույնպես անմխիթար վիճակում են: Այս թեման հատկապես սիրում է շահարկել մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը: Հավանաբար կարծում է, որ անշառ թեմա է, իշխանության շահերին չի առնչվում, եւ շարունակ ուղերձներ է հղում երեխաների իրավունքների մասին, պաթետիկ տեքստեր երկնում, քննարկումներ կազմակերպում, իր մոտ ընդունում երեխաներին եւ այցելում կրթօջախներ եւ այլն: Սակայն այս հարցում էլ պետք է իշխանամետ չլինես, որ կարողանաս անաչառ լինել եւ երեխաների իրավունքների ոտնահարումները նկատել:

Օրինակ, պետք է նկատես, որ վարչապետի կինը՝ Աննա Հակոբյանը, այցելում է հաշմանդամություն ունեցող երեխաներին եւ նրանց օգտագործում սեփական փիառի համար, նաեւ բաց հրապարակելով նրանց լուսանկարները: Իսկ որպես պրոֆեսիոնալ լրագրության էտալոն ներկայացող Հ1-ն էլ ռեպորտաժներ է պատրաստում, թե ինչպես է վարչապետի կինը փիառվում հաշմանդամ երեխաների հաշվին, լուսանկարվում նրանց հետ:

Պետք է նաեւ նկատես, որ Նիկոլ Փաշինյանն էլ է սկսել օգտագործել երեխաներին՝ փիառ նպատակներով: Շատ հաճախ նա լուսանկարվում է երեխաների հետ, նրանց հետ հանդիպումներն օգտագործում՝ իր շուրջն իբրեւ թե բարի հոր, ուշադիր ղեկավարի կերպար ստեղծելու համար: Նա պարբերաբար կառավարությունում ընդունում է անչափահաս տարիքի երեխաներին, զրուցում նրանց հետո, քարոզում իր քաղաքական հայացքները, այլ կերպ ասած՝ ՔՊական կեղծ քարոզչությամբ լվանում մատղաշ ու չձեւավորված երեխաների ուղեղը: Բոլորը տեսած կլինեն, թե նա ինչպես է գնում մանկական ճամբարներ, խարույկի շուրջ երկար ժամեր անցկացնում երեխաների հետ: Կամ՝ ինչ-որ սպարտակիադաներ կազմակերպում, պարգեւատրում, հետո դահլիճային հանդիպումների մասնակցում:

Օրինակ՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջերս Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում ներկա է գտնվել «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների լողի մրցաշարի եզրափակիչ փուլին, որին մասնակցել է 128 դպրոցական: Միջոցառումից հետո հանդիպել է երեխաների հետ, երկար զրույցներ ունեցել, որից հարյուրավոր լուսանկարներ են տեղադրվել կառավարության կայքում: Բայց արդյո՞ք ծնողները նախապես տեղեկացված են լինում այս հանդիպումների, վարչապետի հետ զրույցների մասին, արդյո՞ք նրանք համաձայն են, որ նա իր կեղծ, հակահայկական թեզերը քարոզի չձեւավորված պատանիներին: Մեզ արդեն ծնողներից դժգոհություն է հասել, որ իրենք դեմ են իրենց երեխաների քաղաքականացմանը եւ վախենում են, որ նա այդ հանդիպումների ժամանակ պրոթուրքական, հակահայկական գաղափարներ կսերմանի իրենց անչափահաս երեխաների շրջանում: Կրթական հաստատություններում մեդիագրագիտության դասեր տվող ՀԿ-ները, երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվողները չե՞ն ուզում անդրադառնալ այս հարցերին՝ կարելի՞ է առանց ծնողի կարծիքը, թույլտվությունը հաշվի առնելու, նրանց երեխաներին ինչ-որ գաղափարներ սերմանել: Չկա՞ այստեղ օրենքի խնդիր: Մանավանդ այդ հանդիպումներից հետո նաեւ նկարահանում են, ռեպորտաժներ են պատրաստում՝ ցուցադրելով երեխաների դեմքը՝ դարձյալ առանց ծնողների թույլտվության:

Փաստաբան **Մարինե Ֆարմանյանը**, որը մասնագիտացած է երեխաների իրավունքների պաշտպանության գործում, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, նկատեց. «Օրենքի տեսանկյունից այստեղ կա խնդիր: Անպայման պետք է ծնողի համաձայնությունը լինի առկա, անչափահասի հետ տարվող ցանկացած աշխատանք պետք է տարվի ծնողի հետ համաձայնեցված: Անչափահասի իրավունքների առումով քաղաքացիաիրավական տեսանկյունից ծնողը համարվում է երեխայի օրինական ներկայացուցիչը, եւ երեխայի շահերին եւ իրավունքներին վերաբերող ցանկացած հարց ծնողը լիազորված է լուծելու: Եթե, օրինակ, իքս կրթական հաստատության տնօրենը թույլատրում է, որ աշակերտները ներգրավվեն ինչ-որ մի հանդիպման, քննարկման, ապա ծնողը դպրոցի տնօրենից պետք է պատասխան պահանջի, թե որ իրավունքով են առանց իր հետ համաձայնեցնելու երեխային ներգրավում քաղաքական հանդիպումներին եւ, առհասարակ, այնպիսի հանդիպումների, որոնք ծնողի համար դիտարկվում են խնդրահարույց, անընդունելի:

Ինչ վերաբերում է երեխաների դեմքը բաց նկարահանելուն, նկարները տարածելուն, ապա պետք է շեշտել, որ երեխաներն այս առումով առավել խոցելի են, եւ շատ զգույշ պետք է լինել նման քայլերի դիմելուց առաջ: Կան բազմաթիվ իրավական ակտեր, ըստ որոնց՝ երեխաների անձնական տվյալներին պետք է վերաբերվել խիստ զգուշությամբ, եւ, առհասարակ, ցանկացած անձի անձնական կյանքին վերաբերող տեղեկության անձեռնմխելիությունը պաշտպանելու անհրաժեշտություն կա՝ պետության կողմից, սակայն երեխայի դեպքում՝ առավել եւս: Այստեղ եւս ծնողը պետք է համաձայնությունը տա»:

Իսկ եթե ծնողի տեսակետը հաշվի չի առնվում, հատկապես, երբ խոսքը երկրի վարչապետի կամ նրա կնոջ հետ հանդիպումներին է վերաբերում, այս պարագայում ի՞նչ կարող է անել ծնողը: «Երկրի վարչապետը չէ՝ ով ուզում է լինի, այնպես չէ, որ երկրի ղեկավարի իրավունքներն անսահմանափակ են: Կապ չունի, թե ինչ հեղինակություն ունեցող անձ է միջոցառման բանախոսը, երեխայի հետ կատարվող ցանկացած գործողություն պետք է համաձայնեցված լինի ծնողի հետ: Եթե ծնողի կարծիքը հաշվի չի առնվում, այդ պարագայում ծնողը կարող է նախ դիմել քաղաքապետարան, եթե դրանք պատկանում են քաղաքապետարանին, որպեսզի տնօրենի դեմ ծառայողական քննություն սկսվի: Եթե անձնական կյանքի անձեռնմխելիությունն է խախտվել, ապա այստեղ կարող են քրեաիրավական պրոցեսներ տեղի ունենալ: Քննությունն այս մասով կարող է լինել բարդ, քանի որ խնդիրը համատարած է, բայց օրենքը հստակ նախատեսում է, որ դպրոցի վարչակազմը, տնօրենը, ուսուցիչները պարտավոր են հաշվի նստել ծնողի կարծիքի հետ, հակառակ դեպքում կան պատասխանատվության ենթարկելու կառուցակարգեր»,- ասաց փաստաբանը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՊՅՈՒՇՈՆՈՎ ՌՈԲԻՆ ՈՒ ՆՐԱ ԱՐԿԱԾՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԷԿՐԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Անգլիական բալլադների լեգենդար հերոս Ռոբին Հուդին նոր սերունդը թերեւս դժվար թե իմանա, նրանց հերոսը Հարրի Փոթերն է, «Մատանիների տիրակալը» եւ այլն: Մինչդեռ միջին եւ ավագ սերնդի ներկայացուցիչներին նա ոչ միայն ծանոթ, նաեւ սիրելի կերպար է: Մեծահոգի անտառաբնակ ավազակ, հիանալի նետաձիգ Ռոբին Հուդը, որը հարուստներին ունեզրկում է, գումար եւ արժեքավոր իրեր է խլում ու բաժանում աղքատներին: Խորհրդային մտածողության ժամանակներում նա հարուստների դեմ դասակարգային պայքար մղող հետաքրքիր ու արկածային կերպար էր, հիմնականում՝ դրական ընկալվող:

Այս հերոսի հանդեպ հետաքրքրությունը պակաս մեծ չէր նաեւ Արեւմուտքում, ու պատահական չէ, որ Ռոբին Հուդի մասին առաջին կինոմեկնաբանություններից մեկը հենց Արեւմուտքում է իրականացվել՝ 1938 թվականին «Ռոբին Հուդի արկածները» (The Adventures of Robin Hood) կինոնկարի նկարահանմամբ: Նա անարդարության դեմ պայքարի խորհրդանիշ կերպար է, որը թեեւ հանցանքներ է կատարում՝ կողոպուտներ, սակայն նրա արարքները չեն դատապարտվում հանրության կողմից, քանի որ նա իր կողոպտածը չի յուրացնում, այլ բաժանում է աղքատներին:

Լեգենդը պատմում է, որ Ռոբին Հուդն ու նրա «Շերվուդյան ուրախ ավազակների» հրոսակախումբն ապրել են Շերվուդի անտառներում, որը գտնվում է Նոթինգհեմից ոչ հեռու: Պատահական չէ, որ հայտնի ավազակի դեմ պայքարում է Նոթինգհեմի շերիֆը: Ի դեպ, պատմաբանների մի ստվար խումբ կարծում է, որ լեգենդար այս կերպարի անվան մեջ Hood մասնիկը թարգմանվում է որպես «կապյուշոն», ու նրան կարելի է անվանել նաեւ «Կապյուշոնով Ռոբինը»: Նրա կողմնակիցներից են հոգեւորական Հայր Տուկն ու Փոքրիկ Ջոնը: 1938 թվականին Ռոբին Հուդի թերեւս առաջիններից մեկը հանդիսացող էկրանավորման մեջ գլխավոր հերոսի կերպարը մարմնավորել է հոլիվուդյան ոսկեդարի սեքս-սիմվոլ հանդիսացող Էրոլ Ֆլինը: 1930-40-ական թվականներին Ֆլինը գտնվում էր իր փառքի գագաթնակետին: Քննադատների մեծ մասը նշում է, որ մինչեւ հիմա՝ մոտ 90 տարի անց այդ էկրանավորումից, դեռեւս ոչ ոք չի կարողացել համաշխարհային կինոարվեստում կրկնել այն փայլուն մարմնավորումը, որն իրականացրել է Ֆլինը: Ու պատահական չէ, որ Ռոբին Հուդի օրինակելի կինոկերպարի հեղինակ համարվում է հենց Ֆլինի կերտած կերպարը՝ հմայիչ ու գեղեցիկ, տղայական կերպար, խիզախ ու հանդուգն, նաեւ՝ նրբագեղ: Ու եթե ավելացնենք նաեւ Ռոբինի ու օրիորդ Մերիենի սիրո պատմության նկարագրությունը, որտեղ հերոսուհու կերպարը մերմնավորել է Օլիվիա դե Հեւիլենդը, կարելի է համարել ամբողջականացած, թե ինչու մինչեւ հիմա դասական այս ժապավենը շարունակում է մնալ դասագրքային ու ընդօրինակելի՝ Ռոբին Հուդի բոլոր կինոադապտացիաներից:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹՐԱՄՓԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԴԻՐՆԵՐ ԿՈՒՆԵՆԱ ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Միացյալ Նահանգներում Հանրապետական կուսակցությունը, ամենայն հավանականությամբ, 2026-ին կայանալիք Կոնգրեսի միջանկյալ ընտրություններում կունենա լուրջ խնդիրներ՝ հենց Դոնալդ Թրամփի պատճառով, թեեւ սովորաբար, ինչպես փաստում է ամերիկյան քաղաքական-ընտրական ավանդույթը, այն կուսակցության համար, որի ներկայացուցիչը Սպիտակ տունն է գլխավորում, նախագահը բավականին հզոր ռեսուրս է լինում Կոնգրեսի ընտրությունների համար: Այս մասին գրում է քաղաքագետ Ալեքսեյ Մակարկինն իր վերլուծական հոդվածում: Դա պայմանավորված է նրանով, որ նախագահը ճամփորդում է երկրով մեկ, իրականացնում քարոզչություն հօգուտ իր կուսակից թեկնածուների՝ ընդգծելով, թե ինչ արժանիքներ ունեն նրանք, եւ կոչ է անում քվեարկել նրանց օգտին: Սակայն հիմա, երբ Թրամփի վարկանիշն աստիճանաբար ավելի ու ավելի է անկում գրանցում, շատ հանրապետականների մոտ տարակույսներ են առաջացել՝ գալիք միջանկյալ ընտրությունների հետ կապված: Թեեւ կան փորձագետներ, որոնք կարծում են, որ նախագահական պաշտոնավարման ժամկետի առաջին կեսի համար Թրամփի վարկանիշի ներկայիս անկումը բնական է, քանի որ շատ ընտրողների մոտ հիմա որոշակիորեն կա հիասթափություն՝ սպասելիքների չարդարացվածությամբ պայմանավորված, իսկ նախագահի աշխատանքի դրական արդյունքները դեռ չեն երեւում: Թրամփի պարագայում՝ վարկանիշի անկմանը նպաստում են նաեւ այլ հանգամանքներ: Նա տեւական ժամանակ է՝ խրվել է Էփշտեյնի փաստաթղթերի հանրայնացման օրենքի հետ կապված սկանդալի մեջ՝ ամեն կերպ փորձելով խափանել այդ օրենքի ընդունումը: Արդյունքում՝ դրանից նրա իմիջը զգալիորեն տուժել է: Իսկ երբ չորս հանրապետականներ օգնեցին դեմոկրատներին, որ հարցը մտնի պալատի քննարկումների օրակարգ, պարզ դարձավ, որ «Թրամփի պաշտպանական գիծը ճեղքվածք ունի»: Տասնյակ հանրապետականներ արդեն պատրաստ են խախտել իրենց լոյալությունը նախագահին ու քվեարկել այնպես, ինչպես ուզում են իրենց ընտրողները:

Իսկ ընտրողները ցանկանում են իմանալ ճշմարտությունը եւ հավատում են, որ փաստաթղթերում կարելի է գտնել այդ ճշմարտությունը, քանի որ կարծում են, որ «վերեւներում գտնվողները» իրենցից փորձում են կոծկել ճշմարտությունը: Ու եթե 24 թվականի ընտրարշավի ժամանակ Թրամփը դեմ էր գնում «վերեւներում գտնվողներին», ապա հիմա նա նույնպիսի «վերեւում գտնվող» է դարձել ինքը հասարակ ամերիկացի ընտրողների աչքում: Այս ընթացքում նաեւ պարզվեց, որ Թրամփն այլեւս ամբողջությամբ չի վերահսկում իր քաղաքական հենարան հանդիսացող Հանրապետական կուսակցությունը: Նման պայմաններում նրան այլ բան չէր մնում, քան շեշտակի փոխել իր դիրքորոշումը եւ կոչ անել հանրապետականներին՝ քվեարկել հօգուտ օրենքի նախագծի, որը եւ ընդունվեց: Սակայն Թրամփի գործողությունները շարունակում են շատ հանրապետականների համար մնալ անտրամաբանական ու անհասկանալի:

Նախ, անհասկանալի եղավ այն, թե ինչու նա որոշեց իր աջակցությունից զրկել կոնգրեսական Մարջորի Թեյլոր Գրինին, որը նաեւ բան չարեց, քան նորից հարվածեց սեփական հեղինակությանը: Թեյլոր Գրինը հայտարարեց, որ Կոնգրեսից կհեռանա 26-ի հունվարին: Սակայն նաեւ հրապարակեց բավականին էմոցիոնալ հրաժեշտի տեքստ՝ Թրամփի հանդեպ ունեցած նվիրվածության ու հուսախաբության, Թրամփից հիասթափվածության վերաբերյալ: Նման տեքստերը սովորաբար ազդեցիկ են լինում: Թրամփը միայն արձագանքեց, որ Թեյլոր Գրինի՝ Կոնգրեսից հեռանալու մասին հայտարարությունը հիանալի նորություն է, եւ միայն այդքանը: Ու դեռ սա չավարտված՝ Թրամփը բավական դրվատալից արտահայտություններ է շռայլում Նյու Յորքի նորընտիր քաղաքապետ Զոհրան Մամդանիի հասցեին, որին ոչ վաղ անցյալում անվանում էր «կոմունիստ» ու սպառնում, որ կկրճատի քաղաքին հատկացվող դաշնային ֆինանսավորումը: Ստացվում է, որ Թրամփը յուրայիններին «քոթակում» է, հակառակորդներին՝ «գովասանքներ շռայլում»: Ու սա հանրապետական ընտրողների ու կուսակիցների շրջանում լուրջ շփոթմունքի առիթ է դարձել, որքան էլ փորձ արվի արդարացնել, թե միջանկյալ ընտրություններից առաջ սխալ կլիներ Նյու Յորքի նման խոշոր մեգապոլիսի ղեկավարի հետ կոնֆլիկտ ունենալը:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 27.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՆՎԱԶՈՒՄ Է ՂԵԿԱՎԱՐ ԿԱՆԱՆՑ ԹԻՎԸ

Արա ԱԼՈՅԱՆ

Բազմիցս պնդել եմ, որ Հայաստանին կին առաջնորդ է պետք՝ մի շարք գործոններով պայմանավորված, որից կարեւորագույնը՝ սրտացավություն, հավասարակշռվածություն: Թե՛ վարքի, թե՛ երկխոսության, թե՛ ներքին իմաստով, ավելի շրջահայաց, սթափ ու հաշվենկատ լինելու, իրատեսության, գործնական հայրենասիրության եւ այլ իմաստներով, ամենեւին չթերագնահատելով մեր՝ տղամարդկանց նման որակներն ու կարողությունները: Հայաստանում, ճիշտ է, կան կին ղեկավարներ՝ նախարարներ, փոխնախարարներ, իրավապահներ, սակայն այդ ամենն իրականում ֆոն է, փաշինյանական պետականամերժ ռեժիմի «գեղեցիկ ու ձեւական զարդարանք»: Որովհետեւ նրանք ընդամենը կցորդ են՝ ֆորմալ իմաստով եւ ոչ միայն ...

Իրականում կանանց դերը զուտ «թղթի վրա» է՝ հռչակագրային, միջազգային օրենսդրական պրակտիկայի տառին, բայց ոչ ոգուն համահունչ: Օրինակ, այս տարվա հունիսին «ՄԱԿ-Կանայք» կառույցը տագնապ հնչեցրեց, որ կանանց մասնակցությունն իշխանության մեջ աշխարհում ոչ միայն դադարել է աճել, այլեւ նվազել է: Կազմակերպության նոր զեկույցի հեղինակները մատնանշել են լուրջ համակարգային խոչընդոտները եւ ցույց տվել քաղաքականության մեջ գենդերային հավասարության պակասը: «Կին քաղաքական առաջնորդներ 2025» զեկույցում նշվում է, որ կանայք այժմ ղեկավարում են 27 երկիր, իսկ 103 երկրում երբեք չեն զբաղեցրել բարձրագույն ղեկավար պաշտոն: Անհավասարակշռություն կա նաեւ կառավարություններում. կանայք ամբողջ աշխարհում զբաղեցնում են նախարարական բարձր պաշտոնների 22.9 տոկոսը: Սա ցածր է 2024 թվականի 23.3 տոկոս ցուցանիշից: Սեռային առումով հավասարակշռված նախարարական կաբինետների թիվը, որոնցում կանայք զբաղեցնում են պաշտոնների գոնե 50 տոկոսը, վերջին տարվա ընթացքում նվազել է 15-ից՝ 9: Իսկ կառավարությունում կանանց բացակայությամբ երկրների թիվը 7-ից աճել է 9-ի: Չնայած ոչ մի տարածաշրջան դեռեւս չի հասել գենդերային հավասարության, Եվրոպան եւ Հյուսիսային Ամերիկան (31.4 տոկոս) եւ Լատինական Ամերիկան եւ Կարիբյան ավազանը (30.4 տոկոս) ունեն կառավարությունում կանանց ամենաբարձր համամասնությունը: Կենտրոնական եւ Հարավային Ասիան զգալիորեն հետ են մնում. գեղեցիկ սեռի ներկայացուցիչները զբաղեցնում են նախարարական պաշտոնների ընդամենը 9 տոկոսը: «Աշխարհն ականատես է լինում կանանց քաղաքական առաջնորդության անկման՝ այն ժամանակ, երբ ներառական որոշումների կայացումն ամենաշատն է անհրաժեշտ»,- ասել է «ՄԱԿ-Կանայք» գործադիր տնօրեն Սիմա Բաքուսը:

«Երբ կանայք բարձրագույն պաշտոններ չեն զբաղեցնում, բոլորը պարտվում են. հասարակությունը կորցնում է ավելի արդար եւ ավելի արձագանքող կառավարումը, որը հնարավոր է միայն գենդերային հավասարակշռության դեպքում»: Կանանց ներկայացվածության նվազումը տեղի է ունենում նրանց իրավունքների համաշխարհային ճնշման ֆոնին, որն ավելի է սրվում քաղաքականության մեջ կանանց նկատմամբ լայն տարածում ունեցող բռնության պատճառով՝ թե՛ առցանց, թե՛ արտացանց: Այս միջավայրը շատ կանանց խանգարում է մասնակցել քաղաքականությանը: Գենդերային կարծրատիպերը եւ հաստատված գործելակերպը նույնպես ազդում են նախարարական պորտֆելների բաշխման վրա: Տղամարդիկ գերակշռում են այն պաշտոններում, որոնք որոշում են ազգային եւ միջազգային հիմնական առաջնահերթությունները՝ պաշտպանություն (87 տոկոս), ֆինանսներ եւ հարկային ոլորտ (84 տոկոս) եւ արտաքին քաղաքականություն (82 տոկոս): Մյուս կողմից, կանայք հաճախ նշանակվում են գենդերային հավասարության (87 տոկոս), ընտանիքի եւ երեխաների հարցերին (71 տոկոս) վերաբերող պաշտոններում: Մտահոգիչ է գենդերային հավասարության նախարարությունների թվի նվազումը, որոնք պատասխանատու են գենդերային օրակարգը հանրային քաղաքականության մեջ ինտեգրելու համար: Մինչդեռ 2020-ին կար մոտավորապես 80 նման հաստատություն, 2024 թվականին դա հասել է 76-ի, իսկ 2025-ին՝ 74-ի: «ՄԱԿ-Կանայք» կազմակերպությունը կոչ է արել կառավարություններին եւ քաղաքական առաջնորդներին՝ ձեռնարկել անհապաղ գործողություններ, կատարել նշանակումներ, հատուկ միջոցառումներ (ներառյալ քվոտաները) եւ ուժեղացված պաշտպանություն՝ քաղաքական բռնությունից: Մեր դեպքում, սակայն, գործընթացը պետք է ծավալեն ներքեւից՝ հենց կանայք: Դե, ձեզ տեսնենք, մեր սիրելի կանայք...

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am